6
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2020

Luys Լույս®

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ, ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ, ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ 3

2. ԱՄՆ-ՉԺՀ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ «ՆՈՐ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐԸ 22

3. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳՈՒՄ 38

4. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎՐԱ 51

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզ նման փոքր պետությունները հաճախ թերագնահատում են աշխարհաքաղաքական իրողությունների և զարգացումների կարևորությունը՝ պետության անվտանգության տեսանկյունից: Նման վարքագիծը առաջին հերթին պայմանավորված է լինում այն պարզունակ տրամաբանությամբ, որ փոքր երկրները աշխարհաքաղաքական գործընթացների վրա ազդեցության լուրջ լծակներ չունեն, հետևաբար անիմաստ է դրանց պատշաճ ուսումնասիրության և արձագանքման նպատակով զգալի ռեսուրսների օգտագործումը: Սա այն պարագայում, երբ աշխարհաքաղաքական անցանկալի զարգացումների տեսանկյունից առավել խոցելի են հենց փոքր պետությունները, քանի որ դրանց նկատմամբ ոչ համաչափ արձագանքը կարող է նման երկրներին կանգնեցնել էկզիստենցիալ վտանգի առաջ: Խնդիրը հատկապես սուր է տարածաշրջանային բարդ միջավայրում գտնվող և տարբեր հակամարտությունների մեջ ներգրավված պետությունների համար:

Անկախության վերականգնումից ի վեր Հայաստանի Հանրապետության կարևորագույն ձեռքբերումներից մեկը եղել է այն, որ երկրի զարգացման տարբեր փուլերում իշխանությունները հիմնականում կարողացել են համարժեք ուշադրություն դարձնել աշխարհաքաղաքական գործընթացներին և երկիրը զերծ պահել դրանցից բխող տարբեր սպառնալիքներից և ցնցումներից: Աշխարհաքաղաքական գործընթացների կարևորության գիտակցումը հնարավորություն է տվել բավական բարդ միջավայրում և տարբեր խնդիրների առկայության պայմաններում ապահովել երկրի բնականոն զարգացումը և ի տարբերություն մի շարք այլ հետխորհրդային պետությունների՝ խուսափել գլոբալ հակամարտությունների թատերաբեմում հայտնվելու անցանկալի և խիստ վտանգավոր հեռանկարից:

2018-ին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո երկրում ձևավորված նոր իշխանությունները, սակայն, որդեգրեցին բոլորովին այլ քաղաքականություն՝ թերագնահատելով գլոբալ գործընթացների կարևորությունը և Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգը կառուցելով բացառապես երկրի ներքաղաքական գործընթացների և «հեղափոխության» տրամաբանության շուրջ: Արդյունքում, երկրի բարձրաստիճան ղեկավարության վարքագիծը հաճախ հակասում է տարածաշրջանում և աշխարհում ձևավորված իրողություններին, անտեսվում են տարբեր ուժային կենտրոնների կենսական շահերը, ինչը Հայաստանի համար նորանոր մարտահրավերներ է ստեղծում: Այս վտանգավոր

քաղաքականությունը իր լիարժեք արտացոլումը գտավ 2020թ. հուլիսին հրապարակված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության փաստաթղթում, որը ի թիվս այլ մտահոգիչ դրվագների, աչքի է ընկնում հատկապես աշխարհաքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացների վերաբերյալ ոչ համաչափ գնահատականներով և դրանց կարևորությունն ու ազդեցությունը թերագնահատող ձևակերպումներով[1]:

Ակնհայտ է, որ աշխարհաքաղաքական գործընթացների անտեսման քաղաքականությունը երկար շարունակվել չի կարող, այն վաղ թե ուշ Հայաստանը կանգնեցնելու է լուրջ խնդիրների առջև, և երկրի ղեկավարները ստիպված են լինելու կրկին հաշվի նստել գլոբալ և տարածաշրջանային զարգացումների ու միտումների հետ: Այս տեսանկյունից շատ կարևոր է Հայաստանի վերլուծական-փորձագիտական շրջանակների կողմից աշխարհում տեղ գտնող գլոբալ վերադասավորումների և հետսառըպատերազմյան աշխարհակարգում տեղի ունեցող փոփոխությունների պատշաճ ուսումնասիրությունը, տարածաշրջանի և մեր երկրի համար դրանց ազդեցության գնահատումն ու տարբեր սցենարների կանխատեսումը: Նմանօրինակ փորձագիտական-վերլուծական աշխատանքի կարևորությունը հատկապես մեծանում է ՔՈՎԻԴ-19-ի հետևանքով աշխարհում ստեղծված ճգնաժամի պայմաններում, որը ինչպես բոլոր գլոբալ ճգնաժամերի պարագայում, ավելի է արագացնում աշխարհաքաղաքական փոփոխությունների գործընթացները:

Սույն վերլուծության շրջանակներում փորձել ենք գնահատել կորոնավիրուսի համավարակի աշխարհաքաղաքական հետևանքները: Նախ փորձել ենք հասկանալ, թե ՔՈՎԻԴ-19 համավարակը ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ աշխարհում վերջին տարիներին արդեն իսկ ակնհայտ դարձած աշխարհաքաղաքական վերադասավորումների ակտիվ գործընթացի վրա: Անդրադարձել ենք փոփոխվող աշխարհակարգի առանձնահատկություններին՝ առանձին քննարկման առարկա դարձնելով ԱՄՆ-ՉԺՀ մրցակցության խորացումը և երկբևեռ աշխարհակարգի ձևավորման, երկու գերտերությունների միջև «Նոր սառը պատերազմի» հաստատման հնարավորությունը: Հաշվի առնելով հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունների կարևորությունը և տարածաշրջանային անվտանգության հարցերում Ռուսաստանի կայունացնող ազդեցությունը՝ փորձել ենք հասկանալ, թե

[1] «ՀՀ անվտանգության ռազմավարությունը արտաքին միջավայրում և տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխությունների համատեքստում», «Լույս» հիմնադրամ, 05.08.2020թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=175, (այցելվել է 23.09.2020թ.):

ինչպիսի դերակատարություն կարող է ստանձնել ՌԴ-ը ձևավորվող նոր աշխարհակարգում: Փորձել ենք նաև գնահատել Հայաստանի և տարածաշրջանի վրա աշխարհաքաղաքական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը:

1. ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ

ԽՍՀՄ փլուզումից և «Սառը պատերազմի» ավարտից հետո ձևավորված փաստացի միաբևեռ աշխարհակարգը[2], որտեղ ԱՄՆ-ը և վերջինիս դաշնակիցները միջազգային հարաբերություններում որոշիչ դերակատարություն էին ստանձնել, վերջին տարիներին աստիճանաբար քայքայվում է: ԱՄՆ-ի բացարձակ առավելությունը աշխարհաքաղաքական մյուս կենտրոնների՝ առաջին հերթին Չինաստանի նկատմամբ հետզհետե նվազում է, ինչը կասկածի տակ է դնում միաբևեռ աշխարհակարգն առաջնորդելու ԱՄՆ-ի հնարավորություններն ու կարողությունները[3]:

Այս գործընթացը հատկապես ակներև դարձավ նախորդ տասնամյակի կեսերից, երբ Չինաստանը մի շարք տնտեսական ցուցանիշներով գերազանցեց ԱՄՆ-ին՝ միաժամանակ հանդես գալով տարբեր գլոբալ նախաձեռնություններով, ակտիվորեն

---

[2] «Աշխարհակարգ» կամ «համաշխարհային կարգ» տերմինները սովորաբար օգտագործվում են բնութագրելու համար համաշխարհային քաղաքականության մեջ հանդիպող այնպիսի ցիկլերը, երբ գերտերությունների (այդ թվում՝ մրցակից), միջև ձևավորվում է ընդհանուր պատկերացում, փոխըմբռնում լուրջ հակամարտությունները բացառելու անհրաժեշտության վերաբերյալ: Ամերիկացի դիվանագետ Հենրի Քիսինջերը իր «Աշխարհակարգ» գրքում նշում է, որ համաշխարհային կարգը հիմնվում է երկու հիմնական կոմպոնենտների վրա՝ «համընդհանուր ընդունված կանոնների շարք, որոնք սահմանում են թույլատրելի գործողությունների սահմանները և ուժերի հավասարակշռություն, որը երաշխավորում է զսպվածությունը այդ կանոնների խախտման պարագայում» (Henry A. Kissinger, World Order (New York: Penguin Press, 2014): Որոշ փորձագետներ ընդգծում են «համաշխարհային կարգի» և «միջազգային կարգի» տարբերությունները. ըստ այդմ՝ «միջազգային կարգը» վերաբերում է այն կարգին, որը ղեկավարվում է որևէ մեկ պետության կամ կայսրության կողմից և ոչ միշտ է ներառում աշխարհի բոլոր գերտերություններին: Որպես օրինակ՝ նշվում են Հռոմեական, Բյուզանդական, Մոնղոլական, Չինական, Ֆրանսիական, Բրիտանական, Ռուսական, Գերմանական, Ճապոնական կարգերը:The End of World Order and American Foreign Policy, May 2020, Robert D. Blackwill and Thomas Wright, The Council on Foreign Relations, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/the-end-of-world-order-and-american-foreign-policy-csr.pdf (այցելվել է 23.09.2020թ.):

[3] The End of World Order and American Foreign Policy, May 2020, Robert D. Blackwill and Thomas Wright, The Council on Foreign Relations, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/the-end-of-world-order-and-american-foreign-policy-csr.pdf (այցելվել է 23.09.2020թ.):

ամրապնդելով իր դիրքերը Հարավչինական ծովում, ինչը ամերիկյան փորձագիտական շրջանակների կողմից գնահատվում է որպես միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի գերակայության դեմ նետված մարտահրավեր[4]: Միաժամանակ ավելի ակտիվ միջազգային դերակատարություն ստանձնեցին աշխարհաքաղաքական մյուս բևեռները՝ առաջին հերթին Ռուսաստանի Դաշնությունը, որը միջազգային տարբեր գործընթացների շրջանակներում սկսեց ավելի ակնհայտ հակադրվել Միացյալ Նահանգներին և հավաքական Արևմուտքին:

U.S. and China GDP at PPP Exchange Rates, 1990–2016



SOURCE: Data from International Monetary Fund, "World Economic Outlook Database," database, April 2018.

5

Հատկապես վերջին տարիներին նկատելի է դառնում միջազգային հարաբերություններում որոշ տարածաշրջանային գերտերությունների ազդեցության մեծացումը, որոնք ավելի հաճախ են կասկածի տակ դնում գործող աշխարհակարգի համաչափությունն ու արդիականությունը: Առկա ստատուս քվոն այլևս չի բավարարում տարածաշրջանային հսկայական ազդեցություն ունեցող այնպիսի պետություններին, ինչպիսիք են Հնդկաստանը, Թուրքիան, Գերմանիան, Բրազիլիան, Ճապոնիան, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Իրանը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը և այլն: Այս երկրներից շատերը դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված միջազգային կառույցները և

[4] Lyle J. Morris, "Time to Speak Up About the South China Sea," RAND Corporation, March 20, 2019, http://rand.org/blog/2019/03/time-to-speak-up-about-the-south-china-sea.html , (այցելվել է 23.09.2020թ.):
[5] Measuring Power, Power Cycles, and the Risk of Great-Power War in the 21st Century by Jacob L. Heim, Benjamin M. Miller, RAND Corporation, 2020թ, https://www.rand.org/pubs/research_reports/RR2989.html , (այցելվել է 23.09.2020թ.):

դրանցում առկա ուժերի հարաբերակցությունը համարում են ժամանակավրեպ և ակտիվորեն առաջ են մղում միջազգային կառույցների՝ առաջին հերթին ՄԱԿ-ի և վերջինիս Անվտանգության խորհրդի բարեփոխման օրակարգը:

Միաժամանակ պետք է նշել, որ այս երկրները հիմնականում ոչ թե ցանկանում են առհասարակ քանդել գործող միջազգային ինստիտուտները, այլ մտադիր են դրանք համապատասխանեցնել աշխարհում պետությունների միջև առկա ուժերի հավասարակշռության իրական պատկերին, ընդ որում՝ յուրաքանչյուրն իր պատկերացմամբ: Օրինակ ՉԺՀ-ը փորձում է ընդլայնել իր քվեարկության իրավունքը Համաշխարհային բանկում և Արժույթի միջազգային հիմնադրամում, իսկ Հնդկաստանը ձգտում է դառնալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ[6]:

Ժամանակակից համաշխարհային քաղաքականության գործընթացների առանձնահատկությունն այն է, որ գործող աշխարհակարգի փլուզմանը զուգահեռ՝ անցումը նոր աշխարհակարգին ուղեկցվում է միաժամանակ Արևելքի նկատմամբ Արևմուտքի հարյուրամյակներ շարունակվող գերակայության թուլացմամբ բոլոր ոլորտներում՝ տնտեսություն, մշակույթ, գաղափարախոսություն, ռազմական ոլորտ և այլն: Այսինքն՝ եթե վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում աշխարհակարգի փոփոխությունները դրսևորվում էին բացառապես արևմտյան գերտերությունների միջև ուժային հարաբերակցության փոփոխություններով, ապա ներկայումս ուժերի հավասարակշռության փոփոխությունը տեղի է ունենում Արևելքի և Արևմուտքի միջև՝ ի վնաս վերջինիս: Ընդ որում, այդ հավասարակշռության փոփոխությունը տեղի է ունենում շատ արագ տեմպերով, և եթե 1-2 տասնամյակ առաջ ոչ ոք կասկածի տակ չէր դնում Արևմուտքի բացարձակ գերակայությունը համաշխարհային գործերում, այժմ նույնիսկ արևմտյան շատ փորձագետներ ընդունում են Արևելքի աճող գերակայության փաստը:[7]

---

[6] Perspectives on a Changing World Order, Discussion Paper Series on Managing Global Disorder No. 1, June 2020, Paul B. Stares, Qingguo Jia, Nathalie Tocci, Dhruva Jaishankar, and Andrey Kortunov, The Council on Foreign Relations (CFR), https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/discussion-paper-collection_stares-et-al_final-with-cover.pdf , (այցելվել է 23.09.2020թ.):

[7] The Pandemic and Political Order It Takes a State, By Francis Fukuyama, Foreign Affairs, July/August 2020, https://www.foreignaffairs.com/articles/world/2020-06-09/pandemic-and-political-order (այցելվել է 23.09.2020թ.): ЗАЩИТА МИРА, ЗЕМЛИ, СВОБОДЫ ВЫБОРА ДЛЯ ВСЕХ СТРАН: НОВЫЕ ИДЕИ ДЛЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ, Доклад НИУ ВШЭ, Москва, 2020, http://svop.ru/wp-content/uploads/2020/04/%D0%94%D0%BE%D0%BA%D0%BB%D0%B0%D0%B4_%D0%9D%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5-%D0%B8%D0%B4%D0%B5%D0%B8-%D0%B4%D0%BB%D1%8F-

Այս մասին է վկայում նաև վիճակագրությունը: Եթե ԱՄՆ-ի և վերջինիս Մեծ յոթնյակի անդամ մյուս դաշնակիցների ՀՆԱ-ի ընդհանուր մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում 1992-ին կազմել է 68%, ապա 2015-ին այն կազմել է 47%-ը, 2018-ին՝ 30%-ը, իսկ 2023-ին կանխատեսվում է, որ այն կկազմի ընդամենը 27%-ը[8]: Փոփոխությունների արագության և մասշտաբի տեսանկյունից ուշագրավ է մեկ այլ վիճակագրական տվյալ. դոլարային ցուցանիշով ՀՆԱ համամասնությունը ԱՄՆ-ի, «Եվրոպական եռյակի» (Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա), Ճապոնիայի, Հնդկաստանի և ՉԺՀ-ի միջև 2000-ին եղել է համապատասխանաբար 20–10–10–1–3, 2018-ին՝ 8–4–2–1–5, և եթե 2008-2018թթ. տեմպը պահպանվի, ապա 2028-ին այն կունենա հետևյալ տեսքը՝ 4–2–1–1–6[9]: Նույնը կարելի է ասել պաշտպանական ծախսերի մասին. ՆԱՏՕ-ի պաշտպանական ծախսերը 2017-ին կազմել են համաշխարհային ցուցանիշի 55%-ը՝ նախկին 2/3-ի փոխարեն[10]: Սա ընդգծում է աշխարհում գերտերությունների միջև ուժային հավասարակշռության արագ փոփոխման միտումը:

Համաշխարհային պատմության ընթացքում համավարակները հաճախ անմիջական ազդեցություն են ունեցել միջազգային հարաբերությունների և աշխարհաքաղաքական գործընթացների վրա:[11] Մի շարք փորձագետներ ՔՈՎԻԴ-19 համաճարակը համեմատում են համաշխարհային քաղաքականության պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ հանդիպող այսպես կոչված «սև կարապների»

%D0%B2%D0%BD%D0%B5%D1%88%D0%BD%D0%B5%D0%B9-%D0%BF%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA%D0%B8-%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8.pdf (այցելվել է 23.09.2020թ.):

[8] "Share of Global Gross Domestic Product from G7 and G20 Countries in 2019 and Projections for 2024," Statista, http://statista.com/statistics/722962/g20-share-of-global-gdp (այցելվել է 23.09.2020թ.):

[9] Perspectives on a Changing World Order, Discussion Paper Series on Managing Global Disorder No. 1, June 2020, Paul B. Stares, Qingguo Jia, Nathalie Tocci, Dhruva Jaishankar, and Andrey Kortunov, The Council on Foreign Relations (CFR), https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/discussion-paper-collection_stares-et-al_final-with-cover.pdf , (այցելվել է 23.09.2020թ.):

[10] Andrew Macdonald, Fenella McGerty, and Guy Eastman, "NATO Members Drive Fastest Increase in Global Defense Spending for a Decade," IHS Markit, December 18, 2018, http://milaero.iconnect007.com/index.php/article/114416/nato-members-drive-fastest-increase-in-global-defense-spending-for-a-decade/114419/?skin=ein (այցելվել է 23.09.2020թ.):

[11] After Disruption, historical perspectives on the future of international order, Center for strategic and international studies CSIS, September 2020, https://csis-website-prod.s3.amazonaws.com/s3fs-public/publication/200901_Bates_History_FullReport_v1.pdf, (այցելվել է 23.09.2020թ.): "Влияние эпидемий на подсистемы международных отношений: уроки истории", 22 апреля 2020, Алексей Куприянов, https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/vliyanie-epidemiy-na-podsistemy-mezhdunarodnykh-otnosheniy-uroki-istorii/ (այցելվել է 24.09.2020թ.):

հետ, ինչպես հիմնականում բնութագրվում են համաշխարհային մասշտաբի պատերազմներն ու այլ իրադարձությունները, որոնք էական ազդեցություն են թողնում միջազգային հարաբերությունների և գերտերությունների միջև ձևավորված ուժերի հավասարակշռության վրա: Այս տեսակետի կողմնակիցները համարում են, որ հենց համավարակը և դրան անխուսափելիորեն հաջորդող տնտեսական ճգնաժամն են հանդիսանալու միջազգային հարաբերությունների հիմնական միտումների փոփոխության և կարևոր վերադասավորումների պատճառը,[12] դրանք հիմնովին փոխելու են աշխարհակարգը[13]:

Գոյություն ունի նաև հակառակ տեսակետը, որի հեղինակները կասկածի տակ չեն դնում աշխարհաքաղաքական գործընթացների վրա համավարակի և դրա հետևանքով առաջացած ճգնաժամի էական ազդեցությունը, սակայն գտնում են, որ այդ գործընթացները վերջին տարիներին արդեն իսկ ակտիվ ընթացքի մեջ էին, իսկ համավարակը ոչ թե փոխելու է միջազգային հարաբերությունների ներկայիս ընթացքը, այլ նպաստելու է արդեն իսկ ընթացող գործընթացների արագացմանը[14]: Այս տեսակետի հիմնավորումն այն է, որ պատմական ցիկլերն ու միջազգային կարգերը՝ ինստիտուտների, նորմերի և կանոնների ամբողջությունը, որոնք կանոնակարգում են պետությունների միջև հարաբերությունները կոնկրետ ժամանակաշրջանում, սովորաբար կախված չեն լինում մեկ իրադարձությունից: Աշխարհակարգի փոփոխությունը կարող է տեղի ունենալ տարբեր իրադարձությունների շղթայի արդյունքում, մինչդեռ ներկայիս համավարակը և նմանօրինակ ճգնաժամերը կարող են ուղղակի այդ շղթայի առանցքային մասը դառնալ ու նպաստել անցումային շրջանի ձևավորմանը: Սովորաբար անցումային շրջանում պահպանվում են նախորդ աշխարհակարգի տարրերը, սակայն դրանք

[12] Thomas Wright, "Stretching the International Order to Its Breaking Point," Order From Chaos (blog), April 6, 2020, https://www.brookings.edu/blog/order-from-chaos/2020/04/06/stretching-the-international-order-to-its-breaking-point/ (այցելվել է 24.09.2020թ.): Rana Foroohar, "Life BC and AC," Financial Times, March 23, 2020, http://ft.com/content/b83cb83f-4f72-4b31-aff0-2d398a8aa0ef (այցելվել է 24.09.2020թ.): Mira Rapp-Hooper, "China, America, and the International Order After the Pandemic," War on the Rocks, March 24, 2020, http://warontherocks.com/2020/03/china-america-and-the-international-order-after-the-pandemic (այցելվել է 24.09.2020թ.): "Мир будет другим", 20 апреля 2020, Игорь Иванов https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/mir-budet-drugim/ (այցելվել է 24.09.2020թ.):

[13] The Coronavirus Pandemic Will Forever Alter the World Order, By Henry A. Kissinger, April 3, 2020 https://archive.fo/cyltf (այցելվել է 24.09.2020թ.):

[14] "Геополитика коронавируса. 25 последствий для человечества", 19 мая 2020, Вячеслав Никонов, https://russiancouncil.ru/analytics-and-comments/comments/geopolitika-koronavirusa-25-posledstviy-dlya-chelovechestva/ (այցելվել է 24.09.2020թ.):

գործում են ոչ լիարժեք, փոխարենը աստիճանապբար ասպարեզ են գալիս ծագող աշխարհակարգի տարրերը[15]:

Այս տեսակետն ավելի տրամաբանական է թվում. մասնավորապես, համավարակից առաջ էլ միջազգային հարաբերություններում լարվածության էական աճը նկատելի էր, փորձագետները ավելի հաճախ էին իրենց կանխատեսումներում մտահոգություն հայտնում առաջին իսկ լուրջ ճգնաժամի հետևանքով գլոբալ պատերազմի բռնկման հնարավորության մասին: Դեռ նախքան կորոնավիրուսի համավարակի բռնկումը ստեղծվել էին համաշխարհային տնտեսական ճգնաժամի լուրջ նախադրյալներ, որոնց նպաստում էին ԱՄՆ-ՉԺՀ առևտրային պատերազմներն ու արևմուտքի պատժամիջոցների քաղաքականությունը[16]: Նույնը կարելի է ասել միջազգային իրավունքի դեգրադացիայի, սպառազինությունների վերահսկման միջազգային մեխանիզմների չեղարկման, տարածաշրջանային տերությունների ավելի ագրեսիվ ու ինքնուրույն քաղաքականության և գործող աշխարհակարգը քայքայող այլ երևույթների մասին[17]:

Այսինքն՝ համավարակը կարող էր ինչպես ավելի արագացնել այս գործընթացները, այնպես էլ բաց թողնել համաշխարհային գործընթացներում կուտակված բացասական «գոլորշին» և նպաստել գերտերությունների միջև ավելի կառուցողական երկխոսության մեկնարկին: Սակայն, ինչպես ցույց է տալիս զարգացումների ներկայիս ընթացքը, համավարակը ամեն դեպքում ավելի շատ նպաստում է բացասական գործընթացների արագացմանը:

Միջազգային փորձագետների գրեթե բոլոր օբյեկտիվ վերլուծությունները կասկածի տակ չեն դնում միաբևեռ աշխարհակարգի փլուզման սողացող գործընթացի փաստը, սակայն միաժամանակ դա չի նշանակում, որ ԱՄՆ-ն կորցնելու է կարևոր և որոշակի ժամանակահատվածում նույնիսկ հիմնական ուժային կենտրոնի իր կարգավիճակը: Եթե հաշվի առնենք այսօրվա գերտերություններից յուրաքանչյուրի հավաքական ներուժը, ապա ԱՄՆ-ն այս տեսանկյունից դեռևս

[15] Antonio Gramsci, Selections From the Prison Notebooks, edited and translated by Quintin Hoare and Geoffrey Nowell Smith (London: Lawrence and Wishart, 1971), 276.
[16] "Политика санкций после COVID-19: стоит ли ждать санкционных эпидемий?", Иван Тимофеев, Июнь 2020, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», https://ru.valdaiclub.com/files/34046/ (այցելվել է 24.09.2020թ.):
[17] "Кризис миропорядка и глобальный Юг", 9 июня 2020, Андрей Кортунов, РОССИЙСКИЙ СОВЕТ ПО МЕЖДУНАРОДНЫМ ДЕЛАМ, https://russiancouncil.ru/activity/publications/krizis-miroporyadka-i-globalnyy-yug/ (այցելվել է 24.09.2020թ.):

առաջատարն է և առնվազն դեռ մի քանի տասնամյակ շարունակելու է մնալ համաշխարհային քաղաքականության առանցքային դերակատարներից մեկը: Սակայն սեփական միջազգային կարգի պահպանումը բավական թանկ արժեք ունի. ինչպես բրիտանացի հայտնի պատմաբան և միջազգայնագետ Փոլ Քենեդին է գրում իր «Գերտերությունների վերելքն ու անկումը» գրքում, «գերտերությունները անկում են ոչ թե այն պատճառով, որ պարտվում են աճող տերություններին, այլ որովհետև աշխարհակարգի պահպանման ծախսերը քայքայում են վերջիններիս ռեսուրսները»[18]:

Ամերիկյան «ՌԵՆԴ Քորփորեյշնը» վերջերս հրապարակել էր մի վերլուծություն, որտեղ փորձ է արվում գնահատել և համեմատել գերտերությունների հավաքական հզորությունը և կանխատեսել ուժային հավասարակշռության հետագա փոփոխությունները[19]:



[18] "The rise and fall of the great powers", by Poul Kennedy, 1998, https://www.cia.gov/library/abbottabad-compound/04/04A70DD54F5CB55BED6BE3B351E242EE_The_Rise_and_Fall_of_Great_Power_Paul_Kennedy.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[19] "Measuring Power, Power Cycles, and the Risk of Great-Power War in the 21st Century" by Jacob L. Heim, Benjamin M. Miller,2020, https://www.rand.org/pubs/research_reports/RR2989.html (այցելվել է 24.09.2020թ.):

Այնուհետև ներկայացվում է ուժային հավասարակշռության փոփոխության ցիկլերի առնչությունը գերտերությունների միջև հակամարտությունների սրման հետ: Ըստ այդ վերլուծության՝ գերտերությունների միջև ուժերի հավասարակշռության փոփոխությունը ավելի է մեծացնում բախման ռիսկերը, հատկապես երբ առանցքային դերակատարները անցնում են իրենց համախառն հզորացման գագաթնակետը: Հզորացման գագաթնակետը հաղթահարած պետությունները ավելի վտանգավոր դերակատարներ են դառնում, քան այն պետությունները, որոնց օգտին փոփոխվում է հավասարակշռությունը, քանի որ եթե իրավիճակի ընթացքը վերջիններիս ձեռնտու է, ապա ազդեցությունը կորցնող պետությունները շտապում են առավելագույնը ստանալ իրենց ընթացիկ կարգավիճակից: Միաժամանակ պետությունների հզորության վերաբերյալ կանխատեսումները ցույց են տալիս, որ առաջիկա տասնամյակների ընթացքում հզորացման գագաթնակետը հաղթահարած պետությունների ցանկը գլխավորելու է հենց ԱՄՆ-ը և վերջինիս դաշնակիցները, մինչդեռ հավասարակշռությունը փոխվելու է հօգուտ ՉԺՀ-ի, Հնդկաստանի, իսկ ՌԴ-ը հիմնականում պահպանելու է իր ազդեցության ներկայիս մակարդակը:



[20]

[20] "Measuring Power, Power Cycles, and the Risk of Great-Power War in the 21st Century" by Jacob L. Heim, Benjamin M. Miller,2020, https://www.rand.org/pubs/research_reports/RR2989.html (այցելվել է 24.09.2020թ.):

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ միակ և ամենաուժեղ բևեռի կարգավիճակի, միջազգային քաղաքական, տնտեսական գործընթացները անվերապահորեն վերահսկելու կարողության աստիճանաբար կորուստը ԱՄՆ-ին ստիպելու է ավելի ագրեսիվ արտաքին քաղաքականություն որդեգրել, որը վերջինիս կարող է դարձնել համաշխարհային քաղաքականության ամենավտանգավոր ուժային կենտրոնը[21]:

Նման պայմաններում ԱՄՆ-ն կարծես ընտրել է փորձված ռազմավարությունը, որը վերջինիս հաջողություն է բերել ԽՍՀՄ դեմ պայքարում: ԱՄՆ-ի քայլերի տրամաբանությունը հուշում է, որ վերջինս հակված է աշխարհը կրկին տանել երկբևեռ հակամարտության ճանապարհով և շնորհիվ իր միջազգային կապերի ու ազդեցության՝ կրկին հաղթել այդ հակամարտության մեջ: Համավարակը այս տեսանկյունից նույնպես իր ազդեցությունն է ունենում ԱՄՆ-ի ծրագրերի վրա, քանի որ մի կողմից կասկածի տակ է դնում վերջինիս համաշխարհային առաջնորդության հանգամանքը՝ կապված համավարակի սկզբում իրականացված միակողմանի և պրոտեկցիոնիստական քաղաքականության, միջազգային կառույցները բոյկոտելու փորձերի հետ[22], մյուս կողմից ի ցույց է դնում ճգնաժամը կառավարելու տեսանկյունից ԱՄՆ կառավարման համակարգի անարդյունավետությունը և խաթարում վերջինիս հեղինակությունը: Այս պայմաններում ԱՄՆ իշխանությունները համավարակն օգտագործում են հակաչինական տրամադրություններն ավելի ակտիվացնելու նպատակով:

Համավարակը իր բացասական հետևանքներն է ունենում նաև ԵՄ-ի վրա: Ճգնաժամային իրավիճակում, հատկապես համավարակի բռնկման սկզբնական փուլում ԵՄ երկրների չհամակարգված գործողությունները, հակասությունները, միաժամանակ տարբեր երկրների կողմից պրոտեկցիոնիստական և միակողմանի քայլերը ավելի խորացրին ԵՄ-ում մինչ այդ էլ առկա բաժանարար գծերը: Օրինակ, հարցումներից մեկը ցույց է տվել, որ Ֆրանսիայի բնակչության 84 տոկոսը կողմ է

---

[21] “ЗАЩИТА МИРА, ЗЕМЛИ, СВОБОДЫ ВЫБОРА ДЛЯ ВСЕХ СТРАН: НОВЫЕ ИДЕИ ДЛЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ” Доклад НИУ ВШЭ, Москва, 2020, http://svop.ru/wp-content/uploads/2020/04/%D0%94%D0%BE%D0%BA%D0%BB%D0%B0%D0%B4_%D0%9D%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5-%D0%B8%D0%B4%D0%B5%D0%B8-%D0%B4%D0%BB%D1%8F-%D0%B2%D0%BD%D0%B5%D1%88%D0%BD%D0%B5%D0%B9-%D0%BF%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA%D0%B8-%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[22] “The Pandemic Is Making Transatlantic Relations More Toxic”, ERIK BRATTBERG, APRIL 29, 2020, https://carnegieendowment.org/2020/04/29/pandemic-is-making-transatlantic-relations-more-toxic-pub-81675 (այցելվել է 24.09.2020թ.):

արտահայտվել օտարերկրացիների համար սահմանների փակմանը[23]: Կան մտահոգություններ, որ համավարակը կնպաստի միգրացիոն հարցերով ԵՄ երկրների տարաձայնությունների ավելացմանը: Այս համատեքստում ԵՄ անդամ որոշ՝ հատկապես հարավային և կենտրոնական Եվրոպայի երկրներում ՌԴ և ՉԺՀ ակտիվությունը և վերջիններիս կողմից հումանիտար աջակցությունը ավելի է խորացնում ԵՄ հարավի և հյուսիսի միջև վերջին տարիներին նկատելի դարձած հակասությունները[24]: Ընդ որում, արդեն իսկ ուրվագծվում է հարավում Արևելքի՝ ի դեմս ՉԺՀ-ի և ՌԴ-ի, հյուսիսում Արևմուտքի՝ ԱՄՆ-ի, ազդեցության ամրապնդումը:

Առհասարակ, համավարակի ընթացքում ԱՄՆ-ի վարքագիծը էական իմիջային վնաս հասցրեց եվրոատլանտյան համագործակցությանը[25]: ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև հակասությունները սրվել էին դեռևս համավարակից առաջ, հատկապես Թրամփի իշխանության շրջանում. կողմերի դիրքորոշումները հակասում են արտաքին քաղաքականության, ռազմական ծախսերի, մաքսային կարգավորումների և մի շարք այլ հարցերում: Համավարակի հետևանքով այս հակասությունները ավելի խորացան, երբ ԱՄՆ նախագահ Թրամփը ի հեճուկս եվրոատլանտյան շրջանակների ակնկալիքների, ոչ թե ստանձնեց համավարակի դեմ պայքարի միջազգային առաջնորդությունը, այլ մի շարք միակողմանի որոշումներ կայացրեց՝ առանց գործընկերների հետ պատշաճ քննարկումների փակելով ԵՄ-ի հետ սահմանները, սահմանափակումներ կիրառելով բժշկական պարագաների մասով[26]:

Նման իրավիճակում պատահական չէ, որ ԵՄ մի շարք երկրների առաջնորդներ փորձում են ավելի ինքնուրույն դերակատարություն ստանձնել, և ԱՄՆ-ՉԺՀ հակասությունների խորացմանը զուգահեռ՝ չեն շտապում բոլոր հարցերում ԱՄՆ-ին

---

[23] "Building a Post-Pandemic World Will Not Be Easy", JEAN PISANI-FERRY, APRIL 30, 2020, https://www.bruegel.org/2020/04/building-a-post-pandemic-world-will-not-be-easy/ (այցելվել է 24.09.2020թ.):

[24] "How the Coronavirus Is Testing the EU's Resilience", STEFAN LEHNE, MARCH 25, 2020, https://carnegieeurope.eu/2020/03/25/how-coronavirus-is-testing-eu-s-resilience-pub-81364 (այցելվել է 24.09.2020թ.):

[25] "The End of World Order and American Foreign Policy", Robert D. Blackwill and Thomas Wright, The Council on Foreign Relations (CFR), May 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/the-end-of-world-order-and-american-foreign-policy-csr.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[26] "Trump's Foreign Policy Is No Longer Unpredictable," Thomas Wright, Foreign Afairs, January 18, 2019, https://www.foreignaffairs.com/articles/world/2019-01-18/trumps-foreign-policy-no-longer-unpredictable (այցելվել է 24.09.2020թ.):

անվերապահ աջակցություն ցուցաբերել[27]: Դեռ նախքան համավարակը Եվրոպայում ավելի հաճախ էր շրջանառվում ԵՄ-ը «ավելի աշխարհաքաղաքական» դարձնելու գաղափարը, որը արտահայտվում էր եվրոպացի տարբեր առաջնորդների ելույթներում և հայտարարություններում[28]:

Այս ուղղությամբ նկատելի են նաև ԵՄ կողմից իրականացվող որոշ քայլեր. մասնավորապես, եթե նախկինում ԵՄ արտաքին քաղաքականությունը իր առանցքում դնում էր ժողովրդավարության սկզբունքը, ապա վերջին տարիներին ավելի են ակտիվացել շփումներն ու համագործակցությունը ավտորիտար երկրների հետ (օրինակ՝ Ադրբեջանի, Մերձավոր Արևելքի մի շարք այլ երկրների հետ համագործակցությունը էներգետիկ ոլորտում): Որոշ փորձագետների բնութագրմամբ ԵՄ-ն սկսել է ապավինել իր անմիջական և կարճաժամկետ շահերից բխող, իրավիճակային արտաքին քաղաքականությանը, որտեղ աշխարհաքաղաքականությունը ստորադասվում է աշխարհատնտեսությանը: Այս քաղաքականությունը հավանաբար ավելի կամրապնդվի համավարակի արդյունքում[29]: Սակայն ԵՄ աշխարհաքաղաքական կշիռը մեծ մասամբ կախված կլինի «Եվրոպական եռյակի»՝ Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, հետբրեքզիթյան համագործակցության մակարդակից և որակից[30], եվրոպացի առաջնորդների՝ ԱՄՆ-ից անկախ, ավելի ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու ցանկությունից և հնարավորություններից:

---

[27] "The Pandemic Is Making Transatlantic Relations More Toxic", ERIK BRATTBERG, APRIL 29, 2020, https://carnegieendowment.org/2020/04/29/pandemic-is-making-transatlantic-relations-more-toxic-pub-81675 (այցելվել է 24.09.2020թ.):

[28] 'Meet von der Leyen's geopolitical Commission', Politico, 14 April 2019, https://www.politico.eu/article/meet-ursula-von-der-leyen-geopolitical-commission/ (այցելվել է 24.09.2020թ.): Emmanuel Macron warns Europe: NATO is becoming brain-dead', The Economist, 7 November 2019, https://www.economist.com/europe/2019/11/07/emmanuel-macron-warns-europe-nato-is-becoming-brain-dead (այցելվել է 24.09.2020թ.): J. Borrell, 'Embracing Europe's Power', Project Syndicate, 8 February 2020, https://www.project-syndicate.org/commentary/embracing-europe-s-power-by-josep-borrell-2020-02/russian?barrier=accesspaylog (այցելվել է 24.09.2020թ.):

[29] "Geopolitics and the Covid-19 pandemic: a distorted turn in EU external relations", Richard Youngs, SIEPS, June 2020, https://www.sieps.se/globalassets/publikationer/2020/2020_5epa.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[30] "The Future of the E3 Post-Brexit Cooperation Between the UK, France and Germany", Alice Billon-Galland, Thomas Raines and Richard G. Whitman, Chatham House, July 2020, https://www.chathamhouse.org/sites/default/files/2020-07-28-future-e3-post-brexit-cooperation-billon-galland-raines-whitman.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

Համաձայն մի շարք փորձագիտական կանխատեսումների՝ համավարակի հետևանքով սպասվող տնտեսական ճգնաժամը ավելի է խորացնելու ԵՄ-ԱՄՆ հակասությունները: Ինչպես նշվեց, այդ հակասությունների կարևոր թեմաներից մեկը ԵՄ անդամ երկրների կողմից պաշտպանության ծախսերի բեռի ավելացման վերաբերյալ ԱՄՆ պահանջն է, մինչդեռ տնտեսական ճգնաժամի հետևանքով ԵՄ երկրները հավանաբար այս հարցում ավելի կոշտ դիրքորոշում կգրավեն: Օրինակ, 2008թ. ֆինանսական ճգնաժամից հետո հաջորդ 6 տարիների ընթացքում եվրոպական երկրների պաշտպանության ծախսերը կրճատվել էին 24 մլրդ եվրոյով, իսկ ներկայիս ավելի խոր ճգնաժամի հետևանքով այդ կրճատումները կարող են շատ ավելի մեծ լինել[31]: Զուգահեռաբար երկկողմ հարաբերություններում լուրջ խնդիրներ կարող են առաջացնել հակասությունները այնպիսի առանցքային հարցերում, ինչպիսիք են Իրանի նկատմամբ վարվող քաղաքականությունը, ՉԺՀ և ՌԴ դեմ պատժամիջոցները, վերջինիս հետ էներգետիկ համագործակցությունը, կլիմայական քաղաքականությունը և այլն:

Աշխարհաքաղաքական վերադասավորումների ներկայիս փուլի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանք տեղի են ունենում գլոբալիզացիայի և պետությունների աննախադեպ տնտեսական փոխկախվածության պայմաններում[32], ինչը ցանկացած կտրուկ փոփոխություն դարձնում է առավել վտանգավոր և լի անկանխատեսելի հետևանքներով, վերացնում է զրոյական արդյունքով խաղի «ավանդական» կանոնները: Վերջին շրջանում մի շարք փորձագետներ, հիմնվելով նաև տարբեր հարցումների արդյունքների վրա, կանխատեսում են, որ համավարակի արդյունքում ի հայտ է գալու հակագլոբալիզացիոն և ազգայնական մեծ ալիք[33]: Ոմանք էլ գտնում են, որ հակագլոբալիզացիոն այդ շարժումը նպաստելու է ռեգիոնալիզացիայի գործընթացի արագացմանը: Սակայն աշխարհի համաշխարհայնացման և պետությունների փոխկախվածության ներկայիս մակարդակը գրեթե անհնարին են դարձնում

[31] "The Pandemic Is Making Transatlantic Relations More Toxic", ERIK BRATTBERG, APRIL 29, 2020, https://carnegieendowment.org/2020/04/29/pandemic-is-making-transatlantic-relations-more-toxic-pub-81675 (այցելվել է 24.09.2020թ.):

[32] "В чём угроза новой биполярности", 30.04.2020, Тимофей Бордачёв, https://ru.valdaiclub.com/a/highlights/v-chyem-ugroza-novoy-bipolyarnosti/ (այցելվել է 24.09.2020թ.):

[33] "Asi perciben la pandemia los ciudadanos de EE UU y los principales paises europeos", El Pais, 03.04.2020, https://elpais.com/internacional/2020-04-02/asi-perciben-la-pandemia-los-ciudadanos-de-ee-uu-y-los-principales-paises-europeos.html (այցելվել է 24.09.2020թ.):

գլոբալիզացիայի «մահը», և ավելի հավանական է ոչ թե առհասարակ գլոբալիզացիայի վերացման, այլ դրա բնույթի էական փոփոխության սցենարը:

Միաժամանակ, եթե մինչ այս համաշխարհային քաղաքականության մեջ ձևավորված որոշ կանոններ ու ինստիտուտներ կարողանում էին զսպել գլոբալիզացիայի բացասական հետևանքները, ապա վերջիններիս թուլացումն ու քայքայումը ավելի են բարդացնում միջազգային գործընթացները: Կորոնավիրուսը ոչ միայն չի նպաստել համաշխարհային կարգի և առկա ինստիտուտների ամրապնդմանը, այլև դրանք ավելի է հեղինակազրկել, թուլացրել է գլոբալ կառավարման հնարավորությունները: Առայժմ համավարակի դեմ պայքարի և ստեղծված ճգնաժամը հաղթահարելու տեսանկյունից ոչ այնքան արդյունավետ են նաև աշխարհում ձևավորված այնպիսի բազմակողմ հարթակները, ինչպիսիք են ՄԱԿ-ը, G-7-ը, G-20-ը[34]:

ՄԱԿ-ը իր բազմաթիվ կառույցներով այդպես էլ չկարողացավ լիարժեքորեն համակարգել տարբեր երկրների հակահամաճարակային պայքարը: Դեռ համավարակի սկզբնական փուլում ակնհայտ դարձան G-7-ի երկրների հակասությունները և ճգնաժամի հաղթահարման վերաբերյալ միասնական մոտեցման բացակայությունը: Ի տարբերություն 2008թ. ֆինանսական ճգնաժամի, երբ G-20-ը ճգնաժամի հաղթահարման գործում մեծ դերակատարություն ունեցավ, ներկայումս այս հարթակը ևս չի կարողանում ստեղծված իրավիճակի վերաբերյալ փոխզիջումային լուծումներ գտնել[35]:

---

[34] "The International Order Didn't Fail the Pandemic Alone, The United States and China Are Its Crucial Pillars" By Thomas R. Pickering and Atman M. Trivedi, May 14, 2020, https://www.foreignaffairs.com/articles/world/2020-05-14/international-order-didnt-fail-pandemic-alone (այցելվել է 24.09.2020թ.): What's Happened to the UN Secretary-General's COVID-19 Ceasefire Call?, Richard Gowan, 16 JUNE 2020, https://www.crisisgroup.org/global/whats-happened-un-secretary-generals-covid-19-ceasefire-call (այցելվել է 24.09.2020թ.): "БРИКС и пандемия соперничества", Тимофей Бордачёв, Виктория Панова, Дмитрий Суслов, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Апрель 2020, https://ru.valdaiclub.com/files/32886/ (այցելվել է 24.09.2020թ.):

[35] "Challenges of Global Governance Amid the COVID-19 Pandemic", The Council on Foreign Relations, Tom Bernes, Lars Brozus, Michal Hatuel-Radoshitzky, Ari Heistein, Ettore Greco, Patrycja Sasnal, Igor Yurgens, Sergey Kulik, Yarik Turianskyi, Steven Gruzd, Elizabeth Sidiropoulos, Neuma Grobbelaar, Selim Yenel, Carlos Javier Regazzoni, Chen Dongxiao, Lu Chuanying, Kriti Kapur, Shoba Suri, Philips Vermonte, Yose Rizal Damuri, Shafiah Muhibat, and Mely Caballero-Anthony, May 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/challenges-of-global-governance-amid-the-covid-19-pandemic.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

Նման իրավիճակում ավելի գրագետ և համակարգված աշխատանքի պարագայում կարող է էապես մեծանալ այլ միջազգային կազմակերպությունների ազդեցությունն ու հեղինակությունը, ինչպիսիք են, օրինակ, Շանհայի համագործակցության կազմակերպությունը, ԲՐԻԿՍ-ը և այլն: Վերջինս, թեև միավորում է աշխարհաքաղաքական տարբեր կշիռ ունեցող երկրներ, սակայն դրանք հիմնականում ոչ արևմտյան զարգացող պետություններ են, որոնց ակնհայտորեն չի բավարարում գործող միջազգային կարգը: Եթե ԲՐԻԿՍ-ի անդամ երկրները, անկախ վերոհիշյալ տարբերություններից, կարողանան խուսափել ԱՄՆ-ՉԺՀ, ԱՄՆ-ՌԴ հակամարտության կիզակետում հայտնվելու կամ միմյանց հետ խոր հակասությունների մեջ մտնելու հեռանկարից, այս ձևաչափը կարող է առանցքային տեղ զբաղեցնել նոր ձևավորվող աշխարհակարգում: Միաժամանակ, այն կարող է ընդլայնվել և ընդգրկել այլ, «ոչ արևմտյան» պետություններ, ինչպիսիք են Սաուդիան Արաբիան, Թուրքիան, Ինդոնեզիան, Իրանը, Արգենտինան և այլն:[36]

Համավարակը բացահայտեց նաև առողջապահական ոլորտում համաշխարհային առաջնորդության վակուումը, քանի որ առկա միջազգային կառույցները՝ առաջին հերթին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), չփայլեցին համակարգված գործողություններով: Վերջինս աչքի ընկավ բազմաթիվ հակասական հայտարարություններով և խորհուրդներով, որոնք հեղինակազրկեցին այդ կառույցը: Առաջիկա ժամանակաշրջանում առաջնահերթություն է դառնալու աշխարհում գլոբալ առողջապահական անվտանգության նոր, ավելի կենսունակ հայեցակարգերի և մեխանիզմների ստեղծումը[37]:

Աշխարհում համաընդհանուր անվտանգային մարտահրավերների ծավալի և քանակի աճին զուգահեռ կմեծանա նաև դրանք գերտերությունների արտաքին քաղաքականության առաջնահերթություն դարձնելու հանրային պահանջը: Այսինքն՝ կարող է ձևավորվել գերտերությունների արտաքին քաղաքականության զուգահեռ օրակարգեր, որոնք կներառեն ինչպես 20-րդ դարին և 21-րդ դարի սկզբին բնորոշ արտաքին քաղաքական օրակարգերը, այդ թվում՝ գերտերությունների

[36] "БРИКС и пандемия соперничества", Тимофей Бордачёв, Виктория Панова, Дмитрий Суслов, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Апрель 2020, https://ru.valdaiclub.com/files/32886/ (այցելվել է 24.09.2020թ.):

[37] "The Coronavirus Requires International Security Cooperation", LU YANG, APRIL 07, 2020, https://carnegietsinghua.org/2020/04/07/coronavirus-requires-international-security-cooperation-pub-81482 (այցելվել է 24.09.2020թ.):

մրցակցությունը, այնպես էլ նոր օրակարգեր, որոնք ավելի շատ կապված կլինեն նոր ծագող և 21-րդ դարին հատուկ համամարդկային մարտահրավերների հետ: Միաժամանակ, հավանաբար տարբեր երկրներ իրենց անվտանգության ռազմավարության շրջանակներում կսկսեն ավելի մեծ կարևորություն տալ կենսաբանական անվտանգության խնդիրներին[38]:

Փորձագետները աշխարհաքաղաքական ներկայիս իրավիճակի առանձնահատկություններից մեկն էլ համարում են «գաղափարական ճգնաժամը»: Համաշխարհային քաղաքականության մեջ միջազգային կոմունիզմի և ծայրահեղ ազգայնականության գաղափարների տապալումից, կրոնական գաղափարախոսությունների թուլացումից հետո, վերջին տարիներին նշմարվում է նաև առայժմ գերիշխող գլոբալիստական լիբերալ-ժողովրդավարական գաղափարախոսության անկումը: Այլընտրանքային գաղափարախոսությունը բացակայում է, թեև Ռուսաստանը ստեղծված վակուումը փորձում է լցնել պահպանողական և հայրենասիրական գաղափարներով, Չինաստանը՝ այսպես կոչված «ընդհանուր ճակատագրով համայնքի» գաղափարով[39]: ԱՄՆ-ը իր հերթին փորձում է ՌԴ-ի և ՉԺՀ-ի հետ ներկայիս մրցակցությանը «Սառը պատերազմին» հատուկ գաղափարական հենք հաղորդել՝ այն ներկայացնելով որպես հակամարտություն «ազատ աշխարհի» և «ավտորիտար ռեվիզիոնիստների» միջև:[40] Համաշխարհային քաղաքականության մեջ առաջացած գաղափարական բացը փորձում են լրացնել ծայրահեղ լիբերալիստական, պոպուլիստական և ազգայնական տարրերը, պարարտ հող է ստեղծված նաև կրոնական ծայրահեղականության և

---

[38] "Challenges of Global Governance Amid the COVID-19 Pandemic", The Council on Foreign Relations, Tom Bernes, Lars Brozus, Michal Hatuel-Radoshitzky, Ari Heistein, Ettore Greco, Patrycja Sasnal, Igor Yurgens, Sergey Kulik, Yarik Turianskyi, Steven Gruzd, Elizabeth Sidiropoulos, Neuma Grobbelaar, Selim Yenel, Carlos Javier Regazzoni, Chen Dongxiao, Lu Chuanying, Kriti Kapur, Shoba Suri, Philips Vermonte, Yose Rizal Damuri, Shafiah Muhibat, and Mely Caballero-Anthony, May 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/challenges-of-global-governance-amid-the-covid-19-pandemic.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[39] "ЗАЩИТА МИРА, ЗЕМЛИ, СВОБОДЫ ВЫБОРА ДЛЯ ВСЕХ СТРАН: НОВЫЕ ИДЕИ ДЛЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ" Доклад НИУ ВШЭ, Москва, 2020, http://svop.ru/wp-content/uploads/2020/04/%D0%94%D0%BE%D0%BA%D0%BB%D0%B0%D0%B4_%D0%9D%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5-%D0%B8%D0%B4%D0%B5%D0%B8-%D0%B4%D0%BB%D1%8F-%D0%B2%D0%BD%D0%B5%D1%88%D0%BD%D0%B5%D0%B9-%D0%BF%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA%D0%B8-%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[40] "БРИКС и пандемия соперничества", Тимофей Бордачёв, Виктория Панова, Дмитрий Суслов, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Апрель 2020, https://ru.valdaiclub.com/files/32886/ (այցելվել է 24.09.2020թ.):

ահաբեկչական գաղափարախոսությունների համար, որոնց տարածմանը նպաստում է նաև աշխարհում համավարակի պատճառով ստեղծված ճգնաժամը և տարատեսակ դավադրության տեսությունների տարածումը[41]:

Համավարակը նաև ի չիք դարձրեց ժողովրդավարական կառավարման համակարգի բացարձակ առավելությունների ու արդյունավետության մասին պատրանքները, քանի որ այն որևէ կերպ չդրսևորվեց համավարակի դեմ պայքարում տարբեր երկրներում գրանցված արդյունքներում: Միաժամանակ պետք է նշել, որ տեղին չեն նաև որոշ փորձագետների հակառակ պնդումները ավտորիտար համակարգերի բացարձակ առավելության մասին[42]: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում ոչ ժողովրդավարական կառավարման համակարգ ունեցող երկրները՝ ՉԺՀ, Սինգապուր, Վիետնամ, իրոք գրանցել են շատ ավելի նախանձելի արդյունքներ, քան ամենազարգացած ժողովրդավարությունները՝ ԱՄՆ, ԵՄ մի շարք երկրներ և այլն:

Արդյունքում այս երկրները ճգնաժամի հետևանքով որոշակի իմիջային առավելություն ստացան, որը փորձում են կապիտալիզացնել նաև միջազգային հարաբերություններում: Ճգնաժամի սկզբնական փուլում ՌԴ-ի առողջապահական օժանդակությունը ԱՄՆ-ին և ԵՄ անդամ որոշ երկրներին դրական ազդեցություն ունեցավ Մոսկվայի միջազգային հեղինակության վրա և նպաստեց վերջինիս միջազգային քարոզչական նպատակների իրականացմանը: ՉԺՀ կողմից տարբեր երկրներին տրամադրվող աջակցությունը ունի մի քանի կարևոր նպատակ. նախ ընդգծել պատասխանատու գերտերության և աշխարհաքաղաքական առաջնորդի իր կարգավիճակը, միաժամանակ օժանդակել համաշխարհային տնտեսության արագ վերականգնմանը, որը կնպաստի նաև Չինաստանի տնտեսական կայունացմանը[43]:

---

[41] "The Coronavirus Is a Boon for Global Propagandists", ALICIA WANLESS, APRIL 02, 2020, https://carnegieendowment.org/2020/04/02/coronavirus-is-boon-for-global-propagandists-pub-81455 , https://riss.ru/analitycs/67295/ (այցելվել է 24.09.2020թ.):

[42] "Do Authoritarian or Democratic Countries Handle Pandemics Better?", RACHEL KLEINFELD, MARCH 31, 2020, https://carnegieendowment.org/2020/03/31/do-authoritarian-or-democratic-countries-handle-pandemics-better-pub-81404 (այցելվել է 24.09.2020թ.):

[43] "Beware Russian and Chinese Positioning for After the Pandemic", 9 April 2020, Keir Giles, https://www.chathamhouse.org/expert/comment/beware-russian-and-chinese-positioning-after-pandemic (այցելվել է 24.09.2020թ.):

Համավարակը կրկին առաջին պլան մղեց պետական ինքնիշխանության կարևորությունը[44], որը լիբերալ-գլոբալիստական գաղափարների վերջին տասնամյակների էքսպանսիայի պայմաններում հաճախ կասկածի տակ էր դրվում: Համավարակի պայմաններում պետությունը ստանձնեց քաղաքացիներին պաշտպանելու և առողջապահական ու սոցիալական կոլապսը կանխելու ողջ պատասխանատվությունը[45], ընդ որում՝ հաճախ հակադրվելով տարբեր վերազգային կառույցներին: Սա ամենացայտուն կերպով նկատվեց ԵՄ-ում, որտեղ պետությունները որդեգրեցին համավարակի դեմ պայքարի միմյանցից խիստ տարբերվող, երբեմն միմյանց հակասող ռազմավարություններ:

Ինքնիշխանության նշանակությունը վերարժևորելուն զուգահեռ՝ համավարակը նաև ի ցույց է դնում կառավարման արդյունավետության կարևորությունը ոչ միայն պետության և քաղաքացիների բարեկեցության ապահովման, այլև ճգնաժամային իրավիճակներում երկիրը ցնցումներից և արտաքին կախվածության բացասական հետևանքներից զերծ պահելու տեսանկյունից: Այս առումով չափազանց մեծ գին կարող են վճարել վերջին տարիներին պոպուլիստական շարժումների աշխուժացման հետևանքով աշխարհի տարբեր երկրներում իշխանության եկած ղեկավարները, որոնց ոչ կոմպետենտ կառավարման և անարդյունավետ հակաճգնաժամային միջոցառումների պատճառով այդ երկրները աստիճանաբար մտնում են հումանիտար և սոցիալ-տնտեսական խորը ճգնաժամերի շրջափուլ[46]:

Նման երկրներում մեծ են ռիսկերը, որ հետճգնաժամային վերականգնման փուլում վերջիններս կարող են դառնալ գերտերությունների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական խաղերի զոհ և հայտնվել աշխարհաքաղաքական ընտրության առջև[47], հատկապես եթե հաշվի առնենք պոպուլիստական շարժումների հիման վրա իշխանության եկած ղեկավարների ավանդական կախվածությունը

---

[44] "Глобализация, мировой порядок и технофобия: каких перемен ждать?", 27.04.2020, Самир Саран, https://ru.valdaiclub.com/a/highlights/globalizatsiya-miroporyadok-tekhnofobiya/ (այցելվել է 24.09.2020թ.):
[45] "From Wuhan to the World: How the Pandemic Will Reshape Geopolitics", Francois Heisbourg, 11th May 2020, https://www.iiss.org/blogs/survival-blog/2020/05/from-wuhan-to-the-world (այցելվել է 24.09.2020թ.):
[46] "How Will the Coronavirus Reshape Democracy and Governance Globally?", FRANCES Z. BROWN, SASKIA BRECHENMACHER, THOMAS CAROTHERS, APRIL 06, 2020, https://carnegieendowment.org/2020/04/06/how-will-coronavirus-reshape-democracy-and-governance-globally-pub-81470 (այցելվել է 24.09.2020թ.):
[47] "From Wuhan to the World: How the Pandemic Will Reshape Geopolitics", Francois Heisbourg, 11th May 2020, https://www.iiss.org/blogs/survival-blog/2020/05/from-wuhan-to-the-world (այցելվել է 24.09.2020թ.):

օտարերկրյա տարատեսակ ուժերից: Առողջապահական ճգնաժամը հաղթահարելուց հետո այս երկրներում կարող են կրկին ակտիվանալ զանգվածային բողոքի ակցիաները, ինչպես դա տեղի ունեցավ 2008թ. ճգնաժամից հետո[48]:

Համավարակի սկզբնական փուլում շատ փորձագետներ շտապում էին կանխատեսել, որ այն վերջ կդնի պոպուլիստական շարժումների հաղթարշավին[49], սակայն որքան էլ այս կանխատեսումները տրամաբանական թվան, համավարակը կարող է նաև իշխանության բերել պոպուլիստական նոր ուժերի, որոնք սովոր են ճգնաժամերը ծառայեցնել սեփական քաղաքական նպատակներին[50]: Հետհամաճարակային ցնցումները և տնտեսական խնդիրները կարող են մեծացնել մի շարք զարգացող երկրներում արտաքին պարտքի կտրուկ ավելացման կամ դեֆոլտի ռիսկերը, ինչը բացասաբար կանդրադառնա ընդհանուր գլոբալ ֆինանսական համակարգի վրա՝ զսպելով համաշխարհային տնտեսության արագ վերականգնման հնարավորությունները:[51]

Հաշվի առնելով վերոհիշյալ իրողությունները՝ տարբեր միջազգային հեղինակավոր փորձագետներ և վերլուծական կենտրոններ փորձում են հասկանալ, թե ինչպիսն է լինելու նոր ձևավորվող աշխարհակարգը՝ միաժամանակ պատմական զուգահեռներ անցկացնելով նախկինում տեղի ունեցած նմանատիպ

---

[48] "Will Covid-19 End the Age of Mass Protests?", Samuel Brannen, April 7, 2020, https://www.csis.org/analysis/will-covid-19-end-age-mass-protests (այցելվել է 24.09.2020թ.): "The Pandemic and Political Order It Takes a State" By Francis Fukuyama, July/August 2020, https://www.foreignaffairs.com/articles/world/2020-06-09/pandemic-and-political-order (այցելվել է 24.09.2020թ.):

[49] "Coronavirus' next victim: Populism", By OTTO ENGLISH 3/18/20, https://www.politico.eu/article/coronavirus-next-victim-populism-uk-boris-johnson-us-donald-trump (այցելվել է 24.09.2020թ.): "Will Coronavirus Kill Populism?", By Walter Russell Mead, March 23, 2020, https://www.wsj.com/articles/will-coronavirus-kill-populism-11585004780 (այցելվել է 24.09.2020թ.): "Coronavirus could kill off populism", Gideon Rachman, JUNE 29 2020, https://www.ft.com/content/3bcf2b5e-e5f1-48e4-bb15-cd29615a9198 (այցելվել է 24.09.2020թ.):

[50] "Populism and the Pandemic: A Collaborative Report", Giorgos Katsambekis, Yannis Stavrakakis, Thessaloniki June 2020, https://www.researchgate.net/publication/342205771_Populism_and_the_Pandemic_A_Collaborative_Report (այցելվել է 24.09.2020թ.):

[51] "A MODERN TRAGEDY? COVID-19 AND U.S.-CHINA RELATIONS", THOMAS J. CHRISTENSEN, MAY 2020, https://www.brookings.edu/wp-content/uploads/2020/05/FP_20200511_covid_us_china_christensen_v3.pdf (այցելվել է 24.09.2020թ.): "В мире слабых полюсов. Мультилатерализм после коронавируса", 06.05.2020, Жан-Мари Геэнно, https://ru.valdaiclub.com/a/highlights/v-mire-slabykh-polyusov/ (այցելվել է 24.09.2020թ.):

փոփոխությունների հետ: Հիմնական բանավեճն ընթանում է մի քանի տեսակետների շուրջ՝ ա) բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորում՝ աշխարհի ռեգիոնալիզացիայի ուղեկցությամբ[52], բ) միաբևեռ աշխարհակարգի պահպանում՝ ԱՄՆ և հավաքական Արևմուտքի գերակայությամբ[53] գ) երկբևեռ աշխարհակարգի կամ «Նոր սառը պատերազմի» հաստատում[54]:

Թեև այս բոլոր տեսակետների հիմքերում դրված են բազմաթիվ հիմնավորումներ, սակայն ավելի գերակշռող է այն տեսակետը, որ նոր ձևավորվող աշխարհակարգը լինելու է հիմնականում երկբևեռ, սակայն ներառելու է սկզբնական փուլում միաբևեռ, իսկ հետագայում բազմաբևեռ կարգերին հատուկ բազմաթիվ տարրեր: Այս սցենարը չի բացառում նաև ռեգիոնալիզացիայի խորացումը, երբ պետությունները կփորձեն իրենց տարածաշրջաններում ընդլայնել ազդեցության գոտիները՝ անկախ այս կամ այն ուժային կենտրոնի հետ կոալիցիայից կամ տարբեր միջազգային ինստիտուտներին անդամակցությունից: Փորձագետների համոզմամբ՝ բազմաբևեռ աշխարհակարգն ավելի անկայուն է, քան այլընտրանքային տարբերակները, քանի որ ներառում է մի քանի դերակատարներ, որոնցից յուրաքանչյուրի վարքագծի կտրուկ փոփոխությունը կարող է խախտել ուժային հավասարակշռությունը: Այսինքն, ի տարբերություն «Սառը պատերազմի» ժամանակաշրջանի, ձևավորվող նոր աշխարհակարգում բազմաբևեռ կարգին հատուկ տարրերի առկայությունը այն ավելի անկայուն է դարձնելու, ինչը մեծացնում է տարբեր հակամարտությունների բռնկման հնարավորությունները[55]: Ամեն դեպքում, փոփոխվող աշխարհակարգի վրա ամենամեծ ազդեցությունն ունենալու են ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունները և այդ երկու գերտերությունների մրցակցությունը, հետևաբար

[52] "Возрождение регионализма после пандемии: роль ЕС", 08.05.2020, Ярослав Лисоволик, https://ru.valdaiclub.com/a/highlights/vozrozhdenie-regionalizma-posle-pandemii-rol-es/ , (այցելվել է 24.09.2020թ.): "Глобализация, мировой порядок и технофобия: каких перемен ждать?", 27.04.2020, Самир Саран, https://ru.valdaiclub.com/a/highlights/globalizatsiya-miroporyadok-tekhnofobiya/ (այցելվել է 24.09.2020թ.):

[53] "Geopolitical Scenarios for Asia after COVID-19", Michael J. Green, March 31, 2020, https://www.csis.org/analysis/geopolitical-scenarios-asia-after-covid-19 (այցելվել է 24.09.2020թ.):

[54] "В чём угроза новой биполярности", Тимофей Бордачёв, 30.04.2020, https://ru.valdaiclub.com/a/highlights/v-chyem-ugroza-novoy-bipolyarnosti/ (այցելվել է 24.09.2020թ.):

[55] "Perspectives on a Changing World Order", Paul B. Stares, Qingguo Jia, Nathalie Tocci, Dhruva Jaishankar, and Andrey Kortunov, The Council on Foreign Relations (CFR), June 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/discussion-paper-collection_stares-et-al_final-with-cover.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունները արժանի են առանձին և ավելի մանրամասն ուսումնասիրության:

2. ԱՄՆ-ՉԺՀ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ ԵՎ «ՆՈՐ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՀՆԱՐԱՎՈՐ ՍՑԵՆԱՐԸ

Ինչպես նշվեց, ներկայումս համաշխարհային կարգի փոփոխության վրա ամենամեծ ազդեցությունն են թողնում երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի փոխրահաբերությունները, քանի որ այս երկրները իրենց հավաքական ներուժով և հզորությամբ էականորեն գերազանցում են մյուս ուժային կենտրոններին: Միջազգային փորձագետները ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունների ժամանակակից պատմությունը սովորաբար բաժանում են մի քանի փուլերի: Առաջին փուլը, որի ընթացքում հարաբերությունները հիմնականում թշնամական բնույթ էին կրում, ընդգրկում է ՉԺՀ ստեղծումից մինչև ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնի օրոք երկու երկրների միջև հաշտեցումն ընկած ժամանակահատվածը: Երկրորդ փուլը, որ տևեց մինչև «Սառը պատերազմի» ավարտը, հայտնի է նրանով, որ երկու երկրները ակնհայտ հակասություններ ունեին Խորհրդային Միության հետ, ինչը համագործակցության որոշակի դաշտ էր բացում: Երրորդ փուլը հիմնականում համընկնում է ԽՍՀՄ փլուզումից մինչև 21-րդ դարի երկրորդ տասնամյակի կեսերն ընկած ժամանակահատվածի հետ, երբ Չինաստանը արագորեն ինտեգրվեց համաշխարհային տնտեսությանը, իսկ ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունները նշանավորվեցին երկկողմ առևտրի և ներդրումների արագ աճով: Ներկայումս, ըստ մի շարք փորձագետների, ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունները թևակոխել են զարգացման 4-րդ փուլ, որին ավելի շատ բնորոշ է մրցակցությունը, քան համագործակցությունը[56]:

ԱՄՆ-ՉԺՀ մրցակցությունը վերջին տարիներին հետզհետե ավելի նկատելի էր դառնում, այն ուղեկցվում էր առևտրային պատերազմներով և փոխադարձ պատժամիջոցներով, միջազգային օրակարգի տարբեր հարցերի շուրջ ակնհայտ հակասություններով: Մրցակցության աճին զուգահեռ փորձագետների կողմից ավելի հաճախ է շրջանառվում այն տեսակետը, որ երկու երկրները վաղ թե ուշ հայտնվելու են այսպես կոչված «Թուկիդիդեսի ծուղակում», ըստ որի՝ հզորացող

[56] "Implementing Grand Strategy Toward China; Twenty-Two U.S. Policy Prescriptions", Robert D. Blackwill, The Council on Foreign Relations (CFR), January 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/CSR85_Blackwill_China.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

գերտերություններն անխուսափելիորեն բախվում են գերիշխող պետության հետ[57]: Չինաստանի տնտեսական, քաղաքական և ռազմական ներուժի կտրուկ ավելացումը Միացյալ Նահանգների կողմից սկսվեց ընկալվել որպես առաջնային անվտանգային մարտահրավեր[58], արդյունքում Չինաստանի նկատմամբ զսպումը դարձավ ԱՄՆ արտաքին քաղաքական գլխավոր առաջնահերթությունը:

ԱՄՆ-ՉԺՀ հարաբերությունների ներկայիս փուլում առաջին լուրջ հակասություններն ու մրցակցության խորացման առաջին նշանները նկատելի դարձան դեռևս ԱՄՆ նախորդ նախագահ Բարաք Օբամայի պաշտոնավարման շրջանում: Վերջինս փորձում էր զսպել Չինաստանի աճող ռազմական ներկայությունը Հարավչինական ծովում, միաժամանակ տրանսխաղաղօվկիանոսյան համագործակցության միջոցով նպատակ ուներ կանգնեցնել ՉԺՀ տնտեսական էքսպանսիան Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Դեռ 2015թ. ԱՄՆ-ում ընդունվեց թիվ 13694 գործադիր հրամանը, որը նախագահին հնարավորություն էր տալիս պատժամիջոցներ կիրառել՝ կապված չինացի ցանցահենների կողմից ԱՄՆ քաղաքացիների տվյալների ենթադրյալ հափշտակության հետ[59]: Սակայն ԱՄՆ-ՉԺՀ հակասությունները հատկապես սրվեցին 2017-ից, երբ Թրամփը ստանձնեց ԱՄՆ նախագահի պաշտոնը[60]: Արդեն 2019-ին ԱՄՆ-ում ընդունվեցին չինական

---

[57] Graham Allison, Destined for War: Can America and China Escape Thucydides' Trap? (New York: Houghton Mifflin Harcourt, 2017) https://www.hks.harvard.edu/publications/destined-war-can-america-and-china-escape-thucydidess-trap (այցելվել է 24.09.2020թ.):

[58] Friedberg, "Competing with China," Survival 60, no. 3 June/July 2018, http://tandfonline.com/doi/full/10.1080/00396338.2018.1470755 (այցելվել է 24.09.2020թ.): Bradley A. Thayer and John M. Friend, "The World According to China," Diplomat, October 3, 2018, http://thediplomat.com/2018/10/the-world-according-to-china (այցելվել է 24.09.2020թ.): Andrew Erickson, "Make China Great Again: Xi's Truly Grand Strategy," War on the Rocks, October 30, 2019, http://warontherocks.com/2019/10/make-china-great-again-xis-truly-grand-strategy (այցելվել է 24.09.2020թ.): Shinji Yamaguchi, "The Continuity and Changes in China's Perception of the International Order," NIDS Journal of Defense and Security 17, December 2016, http://www.nids.mod.go.jp/english/publication/kiyo/pdf/2016/bulletin_e2016_5.pdf (այցելվել է 24.09.2020թ.): Aaron Melanie Hart and Blaine Johnson, "Mapping China's Global Governance Ambitions," Center for American Progress, February 28, 2019, http://americanprogress.org/issues/security/reports/2019/02/28/466768/mapping-chinas-global-governance-ambitions (այցելվել է 24.09.2020թ.):

[59] Executive Order 13694 of April 1, 2015. U.S. DEPARTMENT OF THE TREASURY, https://www.treasury.gov/resource-center/sanctions/Programs/Documents/cyber_eo.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[60] U.N. Secretary-General Warns U.S.-China Tensions Risk Dividing World Into '2 Blocs', AUGUST 18, 2020, https://time.com/5879439/antonio-guterres-un-us-

արտադրության ԱԹՍ-երի կիրառումն արգելող մի շարք օրենքներ, զուգահեռաբար Չինաստանի նկատմամբ ճնշումը ավելացավ մարդու իրավունքների թեմայով. 2019-ին Հոնկոնգում տեղի ունեցած ցույցերից հետո ԱՄՆ-ը նույնիսկ պատժամիջոցներ կիրառեց[61]:

ՉԺՀ նկատմամաբ ԱՄՆ վերաբերմունքի արագ փոփոխությունը պայմանավորված էր առաջին հերթին Չինաստանի կողմից նախաձեռնված մի շարք քայլերով, որոնք միտված էին մեծացնելու ՉԺՀ համաշխարհային ազդեցությունն ու դերակատարությունը: Դրանց շարքում հատկապես նշանավոր էր «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի[62] նախաձեռնումը 2013-ին, որը տարբեր փորձագետների կողմից համարվում է չինական «Մարշալի պլանը»[63]: Այս ծրագրի նպատակն է օգտագործել Չինաստանի ներդրումային հնարավորությունները ի նպաստ ծրագրի մասնակից երկրների ենթակառուցվածքների զարգացման՝ արդյունքում խթանելով դեպի այդ երկրներ չինական արտադրանքի արտահանումը և տարածաշրջանի երկրների հետ տնտեսական կապերի ամրապնդումը:

Չինաստանի կարևոր նախաձեռնություններից են նաև Ասիական ենթակառուցվածքների ներդրումային բանկի (AIIB) ստեղծումը 2015-ին, որը շատերի կողմից դիտարկվում է որպես Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի (որոնք Պեկինն ընկալում է որպես ամերիկյան, եվրոպական և ճապոնական շահերը սպասարկող ինստիտուտներ) պոտենցիալ հակառակորդ կառույց, առաջին չինական օտարերկրյա ռազմաբազայի հիմնումը Ջիբութիում 2016-ին և այլն[64]: Արդեն 2017-ին Չինաստանի Կոմունիստական կուսակցության համագումարի ժամանակ իր ելույթում ՉԺՀ նախագահ Սի Ծինփինը հայտարարեց, որ. «Ժամանակն է, որպեսզի Չինաստանն աշխարհում կենտրոնական

---

china/?fbclid=IwAR3fvLnTRrp38u8eMPuqlhUKOSTzGBMtwlc-g3C4ubGVOqTJD5Ww4rpCMCo (այցելվել է 24.09.2020թ.):

[61] Public Law 116-76 – November 27, 2019. URL: https://www.congress.gov/116/plaws/publ76/PLAW-116publ76.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[62] «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» ծրագիրը և դրանում Հայաստանի անորոշ դերակատարությունը», «Լույս» հիմնադրամ, 07,10,2019, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=98 (այցելվել է 24.09.2020թ.):

[63] The Trouble With China's 'One Belt One Road' Strategy, By Jiayi Zhou, Karl Hallding, and Guoyi Han June 26, 2015, https://thediplomat.com/2015/06/the-trouble-with-the-chinese-marshall-plan-strategy/ (այցելվել է 24.09.2020թ.):

[64] "Measuring Power, Power Cycles, and the Risk of Great-Power War in the 21st Century" by Jacob L. Heim, Benjamin M. Miller, 2020, https://www.rand.org/pubs/research_reports/RR2989.html (այցելվել է 24.09.2020թ.):

դերակատարություն ստանձնի»՝ միաժամանակ Չինաստանն անվանելով գերտերություն[65]: Պատահական չէ, որ Թրամփի օրոք՝ 2017թ. ընդունված ԱՄՆ ազգային անվտանգության նոր ռազմավարության փաստաթղթում առանձնահատուկ կարևորություն տրվեց գերտերությունների մրցակցությանը, և Չինաստանը ներկայացվեց որպես ԱՄՆ անվտանգության գլխավոր սպառնալիքներից մեկը[66]:

Ինչպես նշվեց, ԱՄՆ-ՉԺՀ հարաբերություններում լարվածության աճը նկատելի էր դեռ նախքան համավարակը, իսկ վերջինս այն ուղղակի ավելի ակնհայտ և խրոնիկ դարձրեց: Ներկայիս լարվածության հիմքերը շատ ավելի խորն են, դրանք կապված են գերտերությունների գլոբալ մրցակցության և երկու երկրների ազգային անվտանգության շահերի բախման հետ, որը հասկանալու համար հարկավոր է հաշվի առնել ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի երկարաժամկետ անվտանգային շահերը, գլոբալ նպատակներն ու ծրագրերը, վեր հանել դրանցում առկա հակասությունները:

Այսպես, ամերիկյան փորձագիտական շրջանակների համոզմամբ՝ Չինաստանի համար առանցքային կարևորություն ունի կայուն տնտեսական աճն ու բարգավաճումը, որը հնարավոր է ԱՄՆ-ի հետ դրական հարաբերությունների պահպանման և ՉԺՀ-ի անմիջական հարևանությամբ խաղաղ միջավայրի ապահովման դեպքում[67]: ՉԺՀ տարբեր ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Չինաստանի հիմնական ռազմավարական նպատակներն են՝ 1) տարածքային ամբողջականության վերականգնումն ու պահպանումը, 2) Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում մեկ այլ գերտերության գերակայության կանխումը, 3) ՉԺՀ տնտեսական զարգացման համար նպաստավոր միջազգային միջավայրի ստեղծումը, 4) փոփոխվող աշխարհակարգում ՉԺՀ ազդեցության մեծացումը: Ավելի ընդհանրական բնութագրմամբ՝ փորձագետները Չինաստանի հիմնական շահերը բաժանում են 3 խմբի՝ անվտանգություն, ինքնիշխանություն և զարգացում[68]:

---

[65] Xi Jinping: 'Time for China to take centre stage' 18 October 2017, https://www.bbc.com/news/world-asia-china-41647872 (այցելվել է 24.09.2020թ.):
[66] National Security Strategy of the United States of America, DECEMBER 2017, https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2017/12/NSS-Final-12-18-2017-0905.pdf (այցելվել է 24.09.2020թ.):
[67] Nathan and Scobell, 2012a, pp. 112–113, https://www.rand.org/pubs/commercial_books/CB531.html (այցելվել է 24.09.2020թ.):
[68] China's Grand Strategy Trends, Trajectories, and Long-Term Competition, by Andrew Scobell, Edmund J. Burke, Cortez A. Cooper III, Sale Lilly, Chad J. R. Ohlandt, Eric Warner, J.D. Williams, 2020, https://www.rand.org/pubs/research_reports/RR2798.html (այցելվել է 24.09.2020թ.):

Հաշվի առնելով այս հիմնական շահերը՝ 2017թ. հոկտեմբերին Չինաստանի Կոմունիստական կուսակցության 19-րդ համագումարի ժամանակ ՉԺՀ նախագահ Սի Ծինփինը ներկայացրել է երկրի զարգացման 2 փուլից բաղկացած ծրագիրը. առաջին փուլում նախատեսվում է Չինաստանը մինչև 2035թ. դարձնել աշխարհում նորարարության առաջատարը, զգալիորեն ավելացնել փափուկ ուժի գործիքակազմը և ապահովել երկրի ներսում օրենքի գերակայությունը, երկրորդ փուլում նախատեսվում է, որ մինչև 2050թ. Չինաստանը պետք է դառնա «զարգացած, ուժեղ, ժողովրդավարական, մշակութային տեսանկյունից առաջադեմ, ներդաշնակ և գեղեցիկ երկիր»[69]:

Distribution of Confucius Institutes by World Region



[70]

Ռազմավարական հավակնոտ ծրագրերի շրջանառությանը զուգահեռ, Չինաստանում նկատվում է նաև երկրի ներկայիս առաջնորդ Սի Ծինփինի ազդեցության մեծացումը: Կա տեսակետ, որ Սի Ծինփինը Մաո Ձեդունից հետո Չինաստանի ամենաազդեցիկ ղեկավարն է. 2018-ին նույնիսկ վերացվեց

[69] "Secure a Decisive Victory in Building a Moderately Prosperous Society in All Respects and Strive for the Great Success of Socialism with Chinese Characteristics for a New Era Delivered at the 19th National Congress of the Communist Party of China" October 18, 2017, Xi Jinping, http://www.xinhuanet.com/english/download/Xi_Jinping's_report_at_19th_CPC_National_Congress.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[70] China's Grand Strategy Trends, Trajectories, and Long-Term Competition, by Andrew Scobell, Edmund J. Burke, Cortez A. Cooper III, Sale Lilly, Chad J. R. Ohlandt, Eric Warner, J.D. Williams, 2020, https://www.rand.org/pubs/research_reports/RR2798.html (այցելվել է 24.09.2020թ.):

սահմանադրական դրույթը, որը սահմանափակում էր ՉԺՀ նախագահների պաշտոնավարումը միայն երկու 5-ամյա ժամկետի շրջանակներում: Փորձագետների համոզմամբ, այս քայլը միտված է Սի Ծինփինի պաշտոնավարման երկարաձգմանը նաև 2023-ից հետո, երբ սպառվում է նրա նախագահության 2-րդ ժամկետը, ինչը խոսում է վերջինիս հեղինակության և երկարաժամկետ ծրագրերի մասին[71]:

Ամերիկյան փորձագիտական-քաղաքական շրջանակների ընկալմամբ, Չինաստանը իր երկարաժամկետ նպատակներն իրականացնելու համար նախաձեռնելու ԱՄՆ շահերին հակասող մի շարք գործընթացներ[72], որոնց նպատակն է՝

- ասիական տարածաշրջանում փոխարինել ԱՄՆ-ին՝ որպես տարածաշրջանի ամենաազդեցիկ երկիր,
- թուլացնել և ի վերջո փլուզել Ասիայում ամերիկյան դաշնակցային համակարգը,
- ասիական երկրների շրջանում քայքայել ԱՄՆ նկատմամբ վստահությունը, վերջինիս վստահելի գերտերության կարգավիճակը,
- օգտագործելով տնտեսական գործոնները՝ ասիական երկրներին ձգել դեպի չինական աշխարհաքաղաքական առանցք,
- հզորացնել ռազմական ներուժը և զսպել տարածաշրջանում ԱՄՆ ռազմական միջամտության հնարավորությունները,
- կասկածի տակ դնել ամերիկյան տնտեսական, քաղաքական, սոցիալական մոդելի արդյունավետությունը,
- երաշխավորել, որ ամերիկյան ժողովրդավարական արժեքները չեն խոչընդոտի Չինաստանում Կոմունիստական կուսակցության իշխանությանը,
- առնվազն առաջիկա տասնամյակի ընթացքում խուսափել ԱՄՆ-ի հետ մեծ հակամարտությունից:[73]

---

[71] "China allows Xi to remain president indefinitely, tightening his grip on power", By Ben Blanchard, Christian Shepherd, MARCH 11, 2018, https://www.reuters.com/article/us-china-parliament/china-allows-xi-to-remain-president-indefinitely-tightening-his-grip-on-power-idUSKCN1GN07E (այցելվել է 24.09.2020թ.):

[72] This articulation of China's goals was first published in Robert D. Blackwill, "China's Strategy for Asia: Maximize Power, Replace America," National Interest, May 26, 2016, http://nationalinterest.org/feature/chinas-strategy-asia-maximize-power-replace-america-16359

[73] "Implementing Grand Strategy Toward China; Twenty-Two U.S. Policy Prescriptions", Robert D. Blackwill, The Council on Foreign Relations (CFR), January 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/CSR85_Blackwill_China.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

Չինաստանի նման հավակնությունները հակասում են ԱՄՆ-ի կենսական շահերին[74]: ԱՄՆ-ում բավականին տարածված է Սինգապուրի նախկին վարչապետ Լի Կվան Յուի այն տեսակետը, որ. «Համաշխարհային հավասարակշռության վրա Չինաստանի ազդեցության չափն այնպիսին է, որ աշխարհը պետք է նոր հավասարակշռություն գտնի: Չպետք է ձևացնել, թե այն ուղակի հերթական խոշոր դերակատարն է. սա աշխարհի պատմության երբևիցե ամենախոշոր դերակատարն է»[75]: Միացյալ Նահանգները, դեռևս մնալով աշխարհի ամենահզոր ուժային կենտրոնը, չի կարող համակերպվել իր այդ մենաշնորհը կորցնելու հեռանկարի հետ[76], ուստի փորձելու է ամեն կերպ խափանել Չինաստանի ծրագրերը: Այստեղից էլ բխում է Չինաստանի նկատմամբ ԱՄՆ-ի իշխանությունների աճող հակազդեցությունը, որը ներկայումս արդեն վերածվում է պետական քաղաքականության:

Կորոնավիրուսի համավարակի տարածման և դրա արդյունքում աշխարհում ստեղծված նոր իրավիճակի հետևանքով ԱՄՆ-ՉԺՀ հակամարտությունն ավելի սուր բնույթ ստացավ: Չնայած համավարակի սկզբում երկու երկրների միջև համագործակցության և ճգնաժամային իրավիճակում համատեղ լուծումներ գտնելու որոշակի ազդակներ եղան, սակայն հետագայում այն Պեկինի ու Վաշինգտոնի միջև մրցակցության և հակասությունների խորացման նոր առիթ դարձավ: Նախ ԱՄՆ նախագահ Թրամփը սկսեց ակնհայտորեն մեղադրել ՉԺՀ իշխանություններին համավարակի փաստը թաքցնելու և դրա վտանգների մասին միջազգային հանրությանը պատշաճ ձևով չիրազեկելու համար, այնուհետև տարբեր միջազգային հարթակներում փորձում էր ՔՈՎԻԴ-19-ը ներկայացնել որպես «չինական վարակ»: Սրան հաջորդեցին ԱՄՆ նախագահի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ՉԺՀ հասցեին հնչեցվող բազմաթիվ մեղադրանքները՝ սկսած մարդու իրավունքներից, վերջացրած անարդար տնտեսական քաղաքականություն, ռազմական էքսպանսիա և այլն: ԱՄՆ Կոնգրեսում նույնիսկ սկսեցին շրջանառվել

[74] Robert D. Blackwill, "Defending U.S. Vital Interests: Prescriptions for Trump," Foreign Policy, January 25, 2017, http://foreignpolicy.com/2017/01/25/defending-vital-u-s-interests-policy-prescriptions-for-trump (այցելվել է 24.09.2020թ.):

[75] Quote from Lee Kuan Yew in Nicholas D. Kristof, "The Rise of China," Foreign Affairs, November/December 1993, http://foreignaffairs.com/articles/asia/1993-12-01/rise-china (այցելվել է 24.09.2020թ.):

[76] "The U.S.'s Eurasia Obsession, Part 1: Setting the Stage", Rodger Baker, Stratfor, Aug 31, 2020, https://worldview.stratfor.com/article/uss-eurasia-obsession-part-1-setting-stage (այցելվել է 24.09.2020թ.):

ՔՈՎԻԴ-19 հետ կապված ՉԺՀ դեմ պատժամիջոցների առաջին օրենսդրական նախաձեռնությունները[77]:

Ուշագրավ է, որ ԱՄՆ կողմից ՉԺՀ նկատմամբ քննադատությունը ուղեկցվում է մի կողմից՝ Միացյալ Նահանգներում համավարակի տարածման աննախադեպ և աղետալի տեմպերով, սոցիալ-տնտեսական բազմաթիվ խնդիրների սրմամբ, մյուս կողմից՝ համավարակի դեմ ՉԺՀ իշխանությունների համեմատաբար արդյունավետ պայքարով[78] և տնտեսության արագ վերականգնման նախանշաններով: Սրան զուգահեռ՝ ԱՄՆ-ում սրվել է նախընտրական պայքարը, որի առանցքային թեմաներից մեկը դարձել է ՉԺՀ-ի նկատմամբ վարվող քաղաքականությունը:

ԱՄՆ-ՉԺՀ աճող մրցակցության կարևոր ազդակներից մեկը դարձավ 2020թ. հուլիսին Ռիչարդ Նիքսոնի անվան նախագահական գրադարանում պետքարտուղար Մայք Պոմպեոյի՝ չինական քաղաքականության մասին հայտնի ելույթը[79], որտեղ վերջինս ներկայացրեց Չինաստանի հետ երկարաժամկետ հարաբերությունների ռազմավարությունը: Խորհրդանշական այս ելույթի ժամանակ Պոմպեոն կասկածի տակ դրեց Նիքսոնի և Քիսինջերի ջանքերով Չինաստանի հետ հաշտեցման արդյունավետությունը՝ նշելով, որ ԱՄՆ-ը այսուհետ հրաժարվելու է այդ քաղաքականությունից: Պոմպեոյի ելույթը ոմանք կապեցին սպասվող նախագահական ընտրությունների հետ, սակայն դրանում հնչեցված տեսակետները լիովին արտացոլում են Չինաստանի նկատմամբ ԱՄՆ կողմից ներկայումս վարվող քաղաքականությունը: Ելույթում հնչեցված ծրագրային դրույթներն ու նպատակները թույլ են տալիս եզրակացնել, որ դրա միջոցով ԱՄՆ իշխանություններն ուղղակիորեն ազդարարում էին Չինաստանի հետ «Նոր սառը պատերազմի» մեկնարկի մասին: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 75-րդ նստաշրջանում ԱՄՆ

[77] U.S. Congress, A Bill to Require Imposition of Sanctions with Respect to Censorship and Related Activities Against Citizens of the People's Republic of China, 2020, https://www.cruz.senate.gov/files/documents/Letters/ROS20262.pdf (այցելվել է 24.09.2020թ.):
[78] "From Wuhan to the World: How the Pandemic Will Reshape Geopolitics", Francois Heisbourg, 11th May 2020, https://www.iiss.org/blogs/survival-blog/2020/05/from-wuhan-to-the-world(այցելվել է 24.09.2020թ.):
[79] "Communist China and the Free World's Future" SPEECH, MICHAEL R. POMPEO, SECRETARY OF STATE THE RICHARD NIXON PRESIDENTIAL LIBRARY AND MUSEUM, YORBA LINDA, CALIFORNIA, JULY 23, 2020, https://www.state.gov/communist-china-and-the-free-worlds-future/ (այցելվել է 24.09.2020թ.):

նախագահ Թրամփի ելույթը նույնպես կառուցված էր ակնհայտ հակաչինական շեշտադրումների վրա[80]:

Ընդ որում, գերակշռում է այն տեսակետը, որ Չինաստանի հետ մրցակցության քաղաքականությունը երկկուսակցական բնույթ է կրում, և անկախ ԱՄՆ-ում սպասվող նախագահական ընտրությունների արդյունքից, Պոմպեոյի ազդարարած ռազմավարական գիծը դժվար թե լուրջ փոփոխությունների ենթարկվի: Այսինքն՝ թեև դեմոկրատներն ու հանրապետականները հակաչինական ռազմավարության շրջանակներում կարող են տարբեր մարտավարություն ընտրել, սակայն վերջինիս երկարաժամկետ և կոշտ զսպումը լինելու է ԱՄՆ բոլոր ապագա վարչակազմերի օրակարգում: Սրան նպաստում է նաև Չինաստանի նկատմամբ ԱՄՆ-ում ձևավորված հասարակական կարծիքը[81]. ըստ հարցումների, եթե 2005-ին ԱՄՆ-ում բնակչության 43%-ը Չինաստանի նկատմամբ դրական վերաբերմունք ուներ, և միայն 35%-ը բացասական, ապա 2020-ին միայն 26%-ն է դրական վերաբերվում ՉԺՀ-ին, իսկ 66%-ը՝ բացասական: Ամերիկացիների մտահոգությունների շարքում են ՉԺՀ-ի հետ առևտրի դեֆիցիտը, աշխատատեղերի կորուստը, Չինաստանի աճող ռազմական ներուժը, մարդու իրավունքների հարցում ՉԺՀ քաղաքականությունը, կիբեռհարձակումները և այլն[82]:

Չինաստանն իր հերթին նույնպես ավելի ակտիվ արտաքին քաղաքական կուրս է որդեգրել և փորձում է լիարժեքորեն օգտվել համավարակի արդյունքում ստեղծված հնարավորություններից[83]: Մասնավորապես, Պեկինը բազմակողմ հարթակներում փորձում է լրացնել ԱՄՆ-ի գործողությունների արդյունքում ստեղծված առաջնորդության բացը[84]: Օրինակ ԱՄՆ-ի կողմից ԱՀԿ-ի ֆինանսավորումը դադարեցնելու որոշումից մի քանի օր անց Չինաստանը հայտարարեց վերջինիս

---

[80] Donald Trump - United States - President Addresses General Debate, 75th Session, Sep 22, 2020, https://www.youtube.com/watch?v=p0CtV_nMPAI&pp=QAA%3D&ab_channel=UnitedNations (այցելվել է 24.09.2020թ.):

[81] Հասարակական կարծիքի ձևավորման հարցում բավականին մեծ ազդեցություն ունի պետական քարոզչամեքենան, հետևաբար առկա պատկերը նախ և առաջ ԱՄՆ իշխանությունների կողմից վերջին տարիների հակաչինական քարոզչության հետևանքն է:

[82] "China Will Be Front and Center During the 2020 Election", DAN BAER, MAY 04, 2020, https://carnegieendowment.org/2020/05/04/china-will-be-front-and-center-during-2020-election-pub-81738 (այցելվել է 24.09.2020թ.):

[83] "The Pandemic Won't Make China the World's Leader" Michael J. Green, April 15,2020, https://www.csis.org/analysis/pandemic-wont-make-china-worlds-leader (այցելվել է 24.09.2020թ.):

[84] "How Will China Shape Global Governance?", A ChinaFile Conversation, May 9, 2020, https://www.chinafile.com/conversation/how-will-china-shape-global-governance (այցելվել է 24.09.2020թ.):

լրացուցիչ 30 միլիոն դոլար տրամադրելու մասին[85]: Այժմ Չինաստանի ներկայացուցիչները գլխավորում են ՄԱԿ-ի 15 մասնագիտացված կառույցների 1/3-ը, ինչը խոսում է ՄԱԿ-ում Պեկինի հեղինակության և ազդեցության աճի մասին:[86] Արդեն նշվեց, որ Չինաստանը զգալի հումանիտար աջակցություն է տրամադրում տարբեր երկրների, այդ թվում՝ ԱՄՆ դաշնակիցներին: Միաժամանակ ՉԺՀ իշխանությունները ստեղծված իրավիճակն օգտագործում է երկրի ներսում և սահմանակից շրջաններում սեփական ազդեցությունն ամրապնդելու համար[87]:

Ըստ տարբեր փորձագիտական գնահատականների՝ համավարակի արդյունքում կկրճատվի ԱՄՆ և ՉԺՀ միջև տնտեսական ցուցանիշների տարբերությունը, ինչը իր հերթին կազդի երկու երկրների միջև ռազմական հավասարակշռության վրա: Ըստ բոլոր կանխատեսումների՝ 2020թ. ԱՄՆ-ում սպասվում է տնտեսական անկում, մինչդեռ Չինաստանում, չնայած աճի տեմպի նվազմանը, այնուամենայնիվ կանխատեսվում է տնտեսական աճ[88]: Օրինակ 2008թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո հաջորդ տասնամյակի ընթացքում ԱՄՆ ռազմական ծախսերը ընդհանուր առմամբ կրճատվել են շուրջ 500 մլրդ դոլարով: Ներկայիս ավելի խոր ճգնաժամը առաջիկա տարիներին կարող է հանգեցնել ԱՄՆ ռազմական ծախսերի ավելի կտրուկ նվազեցման, ինչը Չինաստանին այս ուղղությամբ հավասարակշռությունը վերականգնելու լավ հնարավորություն կտա[89]:

---

[85] "The International Order Didn't Fail the Pandemic Alone; The United States and China Are Its Crucial Pillars", By Thomas R. Pickering and Atman M. Trivedi, May 14, 2020, https://www.foreignaffairs.com/articles/world/2020-05-14/international-order-didnt-fail-pandemic-alone (այցելվել է 24.09.2020թ.):

[86] China already leads 4 of the 15 U.N. specialized agencies — and is aiming for a 5th, By Courtney J. Fung and Shing-Hon Lam, March 3, 2020, https://www.washingtonpost.com/politics/2020/03/03/china-already-leads-4-15-un-specialized-agencies-is-aiming-5th/ (այցելվել է 24.09.2020թ.):

[87] Changing the Future Part III, William Alan Reinsch, April 13, 2020, https://www.csis.org/analysis/changing-future-part-iii (այցելվել է 24.09.2020թ.):

[88] World Economic Outlook Update, June 2020 June 2020, https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2020/06/24/WEOUpdateJune2020 (այցելվել է 24.09.2020թ.): Robin Brooks and Jonathan Fortun, "GMV—Global Recession," Institute of International Finance, March 23, 2020, https://www.iif.com/Portals/0/Files/content/1_IIF032320_GMV.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[89] "Covid-19 Knocks on American Hegemony", Ashley J. Tellis,May 4, 2020, https://www.nbr.org/wp-content/uploads/pdfs/publications/new-normal-tellis-050420.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

Chart Fifteen: SIPRI Estimates of Russian, U.S., Chinese Military Spending: 1990-2019
(Constant 2018 $US Millions)



Source: SIPRI, https://www.sipri.org/databases/milex. The 1990 and 1991 data for Russia are missing because no estimate is possible for the FSU/Russia.

[90]

Հետճգնաժամային փուլը կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրին նոր թափ հաղորդելու համար: Որքան էլ մյուս երկրների համեմատ համաճարակային վիճակը Չինաստանում ավելի բարվոք լինի, Պեկինի շահերից է բխում հիմնական առևտրային գործընկերների արագ տնտեսական վերականգնումը, առանց որի ՉԺՀ տնտեսության վերականգնումը անհնարին կլինի[91]: «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագիրը այժմ իրապես կարող է

[90] "US Competition with China and Russia; The crisis-driven need to change US strategy",By Anthony H. Cordesman, Center for Strategic and International Studies, 11.08.2020, https://csis-website-prod.s3.amazonaws.com/s3fs-public/publication/2020811.Burke_Chair.AHC_.GH9_.pdf (այցելվել է 24.09.2020թ.):

[91] Changing the Future Part III, William Alan Reinsch, April 13, 2020, https://www.csis.org/analysis/changing-future-part-iii (այցելվել է 24.09.2020թ.):

Չինաստանի կողմից օգտագործվել որպես հետճգնաժամային «Մարշալի պլան», որի իրագործումը Պեկինին ԱՄՆ-ի հետ մրցակցության շրջանակներում մեծ առավելություն կտա:

Մյուս ուղղությունը, որտեղ ՔՈՎԻԴ-19-ի հետ կապված ճգնաժամի արդյունքում Չինաստանը կարող է կրճատել ԱՄՆ-ի առավելությունը, կապված է երկու երկրների կողմից փափուկ ուժի միջազգային կիրառման հնարավորությունների հետ: Համավարակի և դրա դեմ անարդյունավետ պայքարի արդյունքում ԱՄՆ-ին հասցված հսկայական իմիջային հարվածը կարող է կասկածի տակ դնել այս ուղղությամբ Վաշինգտոնի միջազգային առավելությունը, որը առանց այդ էլ վերջին տարիներին էականորեն փոփոխվել էր՝ ի վնաս ԱՄՆ-ի[92]: Օրինակ, ըստ «Մյունխենի անվտանգության զեկույց - 2019»-ի տվյալների, դեռևս 2018թ. ցուցանիշներով ԱՄՆ դաշնակիցներ Ճապոնիայի, Կանադայի, Գերմանիայի, Ֆրանսիայի բնակչության կարծիքով ԱՄՆ-ն իրենց երկրի համար ավելի մեծ սպառնալիք է ներկայացնում, քան ՌԴ-ը, իսկ բացառությամբ Ճապոնիայի, այս երկրների, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի բնակչությունը ԱՄՆ սպառնալիքն ավելի մեծ են գնահատում, քան ՉԺՀ-ինը[93]:

[92] "What World Post-COVID-19? Three Scenarios", Mathew J. Burrows and Peter Engelke, Atlantic Council, 2020, https://www.atlanticcouncil.org/wp-content/uploads/2020/07/What-World-Post-COVID-19.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

[93] "Munich Security Report 2019; The Great Puzzle: Who Will Pick Up the Pieces?", https://securityconference.org/assets/02_Dokumente/01_Publikationen/MunichSecurityReport2019.pdf (այցելվել է 25.09.2020թ.):



94

Աշխարհաքաղաքական հավասարակշռության փոփոխությանը զուգահեռ սրվում է նաև գերտերությունների միջև գաղափարախոսական պայքարը: Ըստ փորձագիտական գնահատականների՝ աճող և գլոբալ առաջնորդության հավակնություններ ունեցող գերտերությունները փորձում են արտահանել սեփական կառավարման մոդելը, որի նպատակով շեշտը դնում են գաղափարախոսության վրա, այսինքն՝ Չինաստանը այս ուղղությամբ նույնպես կարող է ԱՄՆ-ին լուրջ մրցակցություն հակադրել: Ինչպես նշվեց, Չինաստանը իր գաղափարախոսության հիմքում դրել է «խաղաղ զարգացման» և «ընդհանուր ճակատագրի» գաղափարները ու այն հակադրում է արևմտյան լիբերալ-ազատական գաղափարներին. ՉԺՀ կողմից առաջարկվող գաղափարները կարող են դրական ընկալվել հատկապես զարգացող երկրներում, առավել ևս, որ Պեկինը իր գաղափարախոսության մեջ հատուկ շեշտադրում է նաև ինքնիշխանության և չմիջամտելու սկզբունքները: Գաղափարախոսական արագ փոփոխությունները հատուկ են ճգնաժամային ժամանակաշրջաններին, հետևաբար կորոնավիրուսի հետ կապված ներկայիս համաշխարհային ճգնաժամը կարող է մեծ ազդեցություն ունենալ գերտերությունների միջև գաղափարական հակամարտության վրա:

[94] "Climate Change Still Seen as the Top Global Threat, but Cyberattacks a Rising Concern", BY JACOB POUSHTER AND CHRISTINE HUANG, FEBRUARY 10, 2019, https://www.pewresearch.org/global/2019/02/10/climate-change-still-seen-as-the-top-global-threat-but-cyberattacks-a-rising-concern/ (այցելվել է 25.09.2020թ.):

Գլոբալ մրցակցությունը՝ հանուն ազդեցության



95

Վերոհիշյալ իրողությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ՉԺՀ միջև «Սառը պատերազմին» բնորոշ հակամարտությունը ամենահավանական սցենարն է, որը, ինչպես վերջերս իր ելույթներից մեկում նշեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը, կարող է աշխարհը բաժանել 2 խոշոր բևեռների՝ յուրաքանչյուրն իր դոմինանտ արժույթով, առևտրային կանոններով, ռազմական, աշխարհաքաղաքական շահերով, արհեստական ինտելեկտի զարգացման տեսլականով[96]: Որքան նվազի համաշխարհային քաղաքականության վրա ԱՄՆ ազդեցությունը, այնքան ավելի են մեծանալու խնդրահարույց հարցերը շուտափույթ, սեփական օգտին լուծելու վերջինիս մտադրությունները, և հենց սա է պատճառը, որ ԱՄՆ իշխանությունները փորձում են արագորեն սրել Չինաստանի հետ հակամարտությունը[97]:

[95] "Alternative Worldviews; Understanding Potential Trajectories of Great-Power Ideological Competition", by Stephen Watts, Nathan Beauchamp-Mustafaga, Benjamin N. Harris, Clint Reach, RAND Corporation, 2020, https://www.rand.org/pubs/research_reports/RR2982.html (այցելվել է 25.09.2020թ.):

[96] U.N. Secretary-General Warns U.S.-China Tensions Risk Dividing World Into '2 Blocs', AUGUST 18, 2020, https://time.com/5879439/antonio-guterres-un-us-china/?fbclid=IwAR3fvLnTRrp38u8eMPuqlhUKOSTzGBMtwlc-g3C4ubGVOqTJD5Ww4rpCMCo (այցելվել է 25.09.2020թ.):

[97] "Защита мира, земли, свободы выбора для всех стран: новые идеи для внешней политики России", Доклад НИУ ВШЭ, 22.04.2020, http://svop.ru/main/32741/ (այցելվել է 25.09.2020թ.):

Percentage of Citizens in Selected Publics with a Favorable View of the United States

In Tables 1 and 2, positive changes from the earlier survey are represented by a green box, while negative changes from the earlier survey are represented by a red box.

Country	1999/2000	2007	2015	2019	Overall Change 1999–2019
Germany	78	30	50	39	-39
United Kingdom	83	51	65	48	-35
Italy	76	53	83	62	-14
France	62	39	73	48	-14
Poland	66	61	74	79	+13
Russia	37	41	15	29	-8
Turkey	52	9	29	20	-32
Japan	77	61	68	68	-9
South Korea	58	58	84	77	+19
Indonesia	75	29	62	42	-33
Canada	71	55	68	51	-20
Mexico	68	56	66	36	-32

SOURCES: Pew Research Center, Global Indicators Database, "Opinion of the United States," webpage, undated-c; Pew Research Center, "What the World Thinks in 2002," webpage, December 2002.

[98]

Սա ամենևին չի նշանակում, որ գերտերությունների նոր հակամարտությունը ամբողջությամբ նման է լինելու Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժամանակաշրջանին: Այսօրվա իրավիճակը տարբերվում է «Սառը պատերազմի» տարիներին ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ձևավորված հավասարակշռությունից. ի տարբերություն ԽՍՀՄ-ի՝ Չինաստանը ամբողջությամբ ներգրավված է համաշխարհային տնտեսությանը, և ԽՍՀՄ-ի դեմ ԱՄՆ-ի կողմից կիրառված գործիքակազմը ներկայումս դժվար թե նույնքան արդյունավետ լինի: ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցների կտրուկ ավելացման պարագայում Չինաստանը ի վիճակի է լուրջ հակաքայլեր ձեռնարկել. օրինակ, Չինաստանը կարող է սահմանափակել ԱՄՆ համար կարևոր մի շարք ապրանքների արտահանումը, կամ օգտագործել ԱՄՆ խոշոր վարկատուի իր կարգավիճակը, թեև այդ քայլերը կվնասեն ոչ միայն ԱՄՆ-ին, այլև Չինաստանին և համաշխարհային շուկաներին[99]: Միաժամանակ, Չինաստանն

[98] "The Lost Generation in American Foreign Policy How American Influence Has Declined, and What Can Be Done About It" by James Dobbins, Gabrielle Tarini, Ali Wyne, RAND Corporation, 2020, https://www.rand.org/pubs/perspectives/PEA232-1.html (այցելվել է 25.09.2020թ.):

[99] "Политика санкций после COVID-19: стоит ли ждать санкционных эпидемий?", Иван Тимофеев, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Июнь 2020, https://ru.valdaiclub.com/files/34046/ (այցելվել է 25.09.2020թ.):

արդեն իսկ որոշակի քայլեր է ձեռնարկում տնտեսության դոլարային կախվածությունը թուլացնելու նպատակով, ինչը ավելի կսահմանափակի ԱՄՆ պատժամիջոցային քաղաքականության արդյունավետությունը[100]:

Միանշանակ չէ նաև Չինաստանի դեմ տրանսատլանտյան համերաշխությունը[101՝] որը հատկապես կասկածի տակ է դրվել Թրամփի պաշտոնավարման շրջանում[102]: Չինաստանի դեմ միջազգային օղակը սեղմելու համար ԱՄՆ-ին պետք են հավատարիմ դաշնակիցներ, ինչպիսիք կարող են լինել օրինակ «Հինգ աչքի» համագործակցության երկրները՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա: Միաժամանակ, հաշվի առնելով այս երկրներից յուրաքանչյուրի ամուր տնտեսական կապերը Չինաստանի հետ, նույնիսկ այստեղ ակնհայտ հակաչինական օրակարգը կարող է խնդրահարույց դառնալ[103]: Ամեն դեպքում ԱՄՆ կողմից աշխարհում ձևավորված դաշնակցային համակարգը Չինաստանի դեմ պայքարում վերջինիս ամենակարևոր խաղաքարտն է, հատկապես եթե հաշվի առնենք, որ Չինաստանը բացի Հյուսիսային Կորեայից և Պակիստանից որևէ լուրջ դաշնակից չունի: Չինաստանի նկատմամբ զսպման քաղաքականության հաջողությունը կախված կլինի նաև այդ դաշնակցային համակարգը արդյունավետորեն օգտագործելու ԱՄՆ կարողությունից[104]:

Ի տարբերություն «Սառը պատերազմի» տարիների, այլ է նաև աշխարհում առկա ուժային հավասարակշռությունը: Ինչպես նշվեց, ներկայումս առկա են բազմաբևեռ աշխարհակարգին բնորոշ բազմաթիվ տարրեր, որոնք անհնարին են

---

[100] "Facing U.S. Sanctions, China Mulls De-Dollarizing Its Finances", stratfor, Aug 6, 2020, https://worldview.stratfor.com/article/facing-us-sanctions-china-mulls-de-dollarizing-its-finances (այցելվել է 25.09.2020թ.):

[101] "The Pandemic Is Making Transatlantic Relations More Toxic", ERIK BRATTBERG, CARNEGIE ENDOWMENT FOR INTERNATIONAL PEACE, APRIL 2020, https://carnegieendowment.org/files/Brattberg_EU_COVID.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

[102] "Amid Coronavirus Pandemic, China Seeks Larger Role on World Stage", SAM BRESNICK, PAUL HAENLE, APRIL 09, 2020, https://carnegieendowment.org/2020/04/09/amid-coronavirus-pandemic-china-seeks-larger-role-on-world-stage-pub-81515 (այցելվել է 25.09.2020թ.): Ending America's Grand Strategic Failures, By Anthony H. Cordesman, June 22, 2020, https://www.csis.org/analysis/ending-americas-grand-strategic-failures (այցելվել է 25.09.2020թ.):

[103] "Геополитика коронавируса. 25 последствий для человечества",Вячеслав Никонов, 19 мая 2020, https://russiancouncil.ru/analytics-and-comments/comments/geopolitika-koronavirusa-25-posledstviy-dlya-chelovechestva/ (այցելվել է 25.09.2020թ.):

[104] "Implementing Grand Strategy Toward China; Twenty-Two U.S. Policy Prescriptions", Robert D. Blackwill, The Council on Foreign Relations (CFR), January 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/CSR85_Blackwill_China.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

դարձնում դասական «Երկբևեռ սառը պատերազմի» սցենարը[105]: Եթե պատմական զուգահեռներ անցկացնենք, ապա աշխարհում ներկայումս ստեղծված իրավիճակը շատ ավելի նման է 19-րդ դարում «Եվրոպական կոնցերտի» ժամանակաշրջանին, երբ Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը հանդիսանում էին հիմնական ուժային բևեռները, սակայն կային ևս մի քանի գերտերություններ, որոնք անհնարին էին դարձնում բացարձակ երկբևեռ աշխարհակարգի ձևավորումը: Այդ գերտերությունները փորձում էին խուսանավել Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև, սակայն նաև բավականաչափ հզոր էին և ի վիճակի էին ինքնուրույն հետապնդել սեփական աշխարհաքաղաքական շահերը[106]: Այսօր նույնպես, թեև ԱՄՆ-ն և ՉԺՀ-ը հզորությամբ ակնհայտորեն գերազանցում են մյուս գերտերություններին, այնուամենայնիվ մի շարք երկրներ՝ ՌԴ, Հնդկաստան, ԵՄ և այլն, ունեն բավականաչափ ներուժ՝ համեմատաբար ինքնուրույն աշխարհաքաղաքական դերակատարություն ստանձնելու համար[107]:

3. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳՈՒՄ

Համաշխարհային քաղաքականության մեջ տեղի ունեցող արագընթաց փոփոխությունները իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ՌԴ արտաքին քաղաքականության վրա: Ռուսաստանը, հանդիսանալով Հարավկովկասյան տարածաշրջանում ամենաազդեցիկ դերակատարը, ինչպես նաև Հայաստանի ամենակարևոր միջազգային գործընկերն ու դաշնակիցը, առանցքային դեր է խաղում Հայաստանի անվտանգության, տարածաշրջանային կայունության և խաղաղության պահպանման գործում: Հետևաբար շատ կարևոր է հասկանալ, թե ընթացիկ աշխարհաքաղաքական վերադասավորումները ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ Ռուսաստանի վրա, որն է լինելու վերջինիս տեղն ու դերը փոփոխվող աշխարհակարգում:

---

[105] "COVID-19 Heats up the U.S.-China Competition" Rodger Baker, Stratfor, May 21, 2020, https://worldview.stratfor.com/article/covid-19-heats-us-china-competition (այցելվել է 25.09.2020թ.):

[106] Paul W. Schroeder, The Transformation of European Politics 1763–1848 (New York: Oxford University Press, 1994

[107] "China, the U.S., and the Geography of the 21st Century", Rodger Baker, Stratfor, Aug 21, 2020 https://worldview.stratfor.com/article/china-us-and-geography-21st-century (այցելվել է 25.09.2020թ.): "U.S.-Russian Relations in 2030" Richard Sokolsky and Eugene Rumer, Carnegie Endowment for International Peace, JUNE 2020, https://carnegieendowment.org/files/SokolskyRumer_US-Russia-2030_final1.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

Դեռևս 90-ականների կեսերից, երբ ակնհայտ դարձավ, որ «Սառը պատերազմի» ավարտը ամենևին չի դադարեցնելու Արևմուտքի կողմից Ռուսաստանի նկատմամբ «զսպման» քաղաքականությունը, Մոսկվան սկսեց ակտիվորեն պաշտպանել բազմաբևեռ աշխարհակարգի գաղափարը, որը շուտով դրվեց ՌԴ արտաքին քաղաքական հայեցակարգի հիմքերում: Գաղափարի հիմնական կողմնակից, Ռուսաստանի այդ ժամանակվա արտգործնախարար Եվգենի Պրիմակովը որոշակի քայլեր նախաձեռնեռնեց Ռուսաստան-Չինաստան-Հնդկաստան առանցքի ձևավորման ուղղությամբ, իսկ արդեն 2000-ական թվականներից սկսած՝ ՌԴ-ը սկսեց այդ ռազմավարությունը կյանքի կոչել գործնական քայլերի միջոցով[108]:

Եթե սկզբնական փուլում բազմաբևեռ աշխարհակարգի գաղափարը բավական գրավիչ էր և մեծ աջակցություն էր վայելում բազմաթիվ երկրների կողմից, ապա ներկայումս այդ գաղափարը բախվում է երկբևեռ ուժային հավասարակշռության փաստացի իրողության հետ[109]: Աշխարհաքաղաքական դասավորության արագ փոփոխությունը, որը ավելի ընդգծված դարձավ կորոնավիրուսային ճգնաժամի պայմաններում, որոշակի նախադրյալներ է ստեղծում նաև ՌԴ արտաքին քաղաքականության և համաշխարհային կարգի վերաբերյալ վերջինիս պատկերացումների վերանայման համար:

Ի տարբերություն 90-ականների և 2000-ականների, ներկայումս Ռուսաստանը զգալիորեն վերականգնել է հավաքական Արևմուտքին հակադրվելու իր հնարավորություններն ու գործիքակազմը: Սրան հատկապես նպաստել է միջազգային տարբեր հարցերում Ռուսաստանի դիրքորոշման կոշտացումը և երկրի ռազմական ներուժի ավելացումը. նոր, գերժամանակակից ռազմական համակարգերի ստեղծումը անհնարին է դարձրել առաջիկա տարիներին Ռուսաստանի նկատմամբ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի այնպիսի ռազմական առավելությունը, որը կմեծացներ ՌԴ-ի դեմ ագրեսիայի և մեծ պատերազմի ռիսկերը: Սա նաև առաջիկա տարիների համար զգալիորեն մեծացրել է սպառազինությունների

---

[108] "БРИКС и пандемия соперничества",Тимофей Бордачёв, Виктория Панова, Дмитрий Суслов, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Апрель 2020 https://ru.valdaiclub.com/files/32886/ (այցելվել է 25.09.2020թ.):

[109] "Россия в мире после коронавируса: новые идеи для внешней политики", Сергей Караганов, Дмитрий Суслов, 22 апреля 2020, https://russiancouncil.ru/analytics-and-comments/comments/rossiya-v-mire-posle-koronavirusa-novye-idei-dlya-vneshney-politiki/ (այցելվել է 25.09.2020թ.):

մրցավազքի գինը, այն դարձրել է գրեթե անիմաստ[110]: Նման իրավիճակը Ռուսաստանի արտաքին քաղաքական գերակայությունները վերանայելու համար որոշակի նոր հնարավորություններ է ստեղծում:

Ռուսաստանի՝ որպես աշխարհաքաղաքական գործոնի կարևորության ավելացումը նպաստավոր պայմաններ է ստեղծել բազմաթիվ երկրների ինքնիշխան զարգացման, մշակութային, քաղաքական և տնտեսական նախընտրած մոդելով ազատ կենսագործունեության համար, ինչը չափազանց բարդ էր միաբևեռ աշխարհակարգի պայմաններում: Սիրիայում և Վենեսուելայում կանգնեցնելով գունավոր հեղափոխությունների և ռեժիմի փոփոխության նպատակով Արևմուտքի ինտերվենցիոն քաղաքականության հաղթարշավը՝ Ռուսաստանը այս և տարածաշրջանի մի շարք այլ երկրների համար զարգացման այլընտրանքային մոդելի հնարավորություն ապահովեց: Կապված ԱՄՆ-ՉԺՀ մրցակցության խորացման, երկու գերտերությունների միջև երկբևեռ հակամարտության սրման ռիսկերի հետ՝ Ռուսաստանի այս դերակատարությունը կարող է ավելի ամրապնդվել: Սա մի շարք երկրների հնարավորություն կտա խուսափել Վաշինգտոնի և Պեկինի միջև ընտրություն կատարելու և բլոկային աշխարհաքաղաքականության մեջ ներքաշվելու ռիսկերից և դրա բացասական հետևանքներից:

Միևնույն ժամանակ ԱՄՆ-ՉԺՀ մրցակցության խորացումը և աշխարհի բևեռացումը Ռուսաստանի համար նաև մի շարք ռիսկեր են պարունակում[111]: Վերջինս իր հավաքական հզորությամբ զգալիորեն զիջում է թե՛ ԱՄՆ-ին, թե՛ Չինաստանին, հետևաբար չի կարող երկարաժամկետ հեռանկարում միայն սեփական ներուժով առանձին և ինքնուրույն աշխարհաքաղաքական բևեռի դերակատարություն ստանձնել: Իհարկե, Վաշինգտոնի կողմից Չինաստանի, այլ ոչ թե Ռուսաստանի դիտարկումը որպես գլխավոր մրցակից, կարող է Մոսկվայի համար ձեռնտու թվալ,

---

110 ЗАЩИТА МИРА, ЗЕМЛИ, СВОБОДЫ ВЫБОРА ДЛЯ ВСЕХ СТРАН: НОВЫЕ ИДЕИ ДЛЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ, Доклад НИУ ВШЭ, Москва, 2020, http://svop.ru/wp-content/uploads/2020/04/%D0%94%D0%BE%D0%BA%D0%BB%D0%B0%D0%B4_%D0%9D%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5-%D0%B8%D0%B4%D0%B5%D0%B8-%D0%B4%D0%BB%D1%8F-%D0%B2%D0%BD%D0%B5%D1%88%D0%BD%D0%B5%D0%B9-%D0%BF%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA%D0%B8-%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8.pdf f (այցելվել է 25.09.2020թ.):

111 "Отношения США с Китаем станут самым важным вопросом американской внешней политики на ноябрьских выборах", Глеб Ивашенцов, 6 мая 2020, https://russiancouncil.ru/analytics-and-comments/interview/otnosheniya-ssha-s-kitaem-stanut-samym-vazhnym-voprosom-amerikanskoy-vneshney-politiki-na-noyabrskikh/ (այցելվել է 25.09.2020թ.):

սակայն ԱՄՆ-ի «երկրորդ հակառակորդի» կարգավիճակը ոչ միայն չի երաշխավորում Ռուսաստանի համար տեսանելի առավելություններ, այլև զգալիորեն նվազեցնում է վերջինիս աշխարհաքաղաքական կշիռն ու կարևորությունը: Մեծ է վտանգը, որ Ռուսաստանը կարող է վերջնարդյունքում հայտնվել Չինաստանի կամ ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական առանցքում և ի վերջո կորցնել գլոբալ հավակնություններ ունեցող գերտերության կարգավիճակը:

Ակնհայտ է, որ մոտ ապագայում ԱՄՆ-ՌԴ հարաբերություններում արմատական փոփոխություններ սպասելն անիմաստ է, քանի որ երկու երկրների մրցակցությունը համակարգային բնույթ ունի, և դժվար թե առաջիկայում լուրջ վերանայման ենթարկվի: Երկարաժամկետ հեռանկարում Մոսկվայի կտրուկ շրջադարձը դեպի Վաշինգտոն նույնպես անիրատեսական է, քանի որ այդ պարագայում Ռուսաստանը փաստացի ստիպված կլինի ԱՄՆ-ի առջև կապիտուլացիայի ենթարկվել՝ միաժամանակ, հանձին Չինաստանի, ձեռք բերելով ավելի վտանգավոր մրցակից, քան Արևմուտքն է: Սա կարող է ապակայունացնել հենց Ռուսաստանը և երկիրը վերածել երկու գերտերությունների միջև աշխարհաքաղաքական հակամարտության թատերաբեմի[112]:

Սակայն, ԱՄՆ-ՉԺՀ լարվածության խորացմանը զուգահեռ, այնուամենայնիվ ակնկալվում է Մոսկվայի և Վաշինգտոնի միջև հակասությունների մասնակի թուլացում: Ամերիկյան փորձագիտական շրջանակների կողմից հաճախ շրջանառվում է Չինաստանի հետ մրցակցության խորացման համատեքստում ՌԴ-ի հետ հարաբերությունների զարգացման մի քանի առաջնահերթություններ, այդ թվում.

- խուսափել Եվրոատլանտյան գոտում ԱՄՆ-ՌԴ հակամարտությունից և նվազեցնել այդպիսի հակամարտության էսկալացիայի ռիսկերը,
- վերականգնել ռազմավարական կայունությունը և վերացնել սպառազինությունների վերահսկողության քայքայման և նոր ռազմական տեխնոլոգիաների զարգացման հետևանքով ի հայտ եկած ռիսկերը,
- համագործակցել այլ երկրների կողմից միջուկային զենքի հնարավոր ձեռքբերումը կանխելու ոլորտում,
- համագործակցել Մերձավոր Արևելքում՝ առաջին հերթին Պարսից ծոցում, խաղաղության և կայունության պահպանման հարցում,

[112] “Как России удержать равновесие в посткризисном биполярном мире”, Дмитрий Тренин, 15.04.2020, https://carnegie.ru/commentary/81541 (այցելվել է 25.09.2020թ.):

- համագործակցել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում Չինաստանի բացարձակ գերակայությունը կանխելու ուղղությամբ,
- կանոնակարգել ԱՄՆ-ՌԴ մրցակցությունը կիբեռ տիրույթում և տիեզերքում[113]:

Ընդհանուր առմամբ, ստեղծված իրավիճակում ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ՌԴ-ի համար կարևոր է մի կողմից՝ արդյունավետ ձևով կառավարել երկկողմ ռազմավարական մրցակցությունը, այլ ոչ թե անհապաղ վերացնել այն, մյուս կողմից՝ նվազեցնել անմիջական ռազմական հակամարտության ռիսկերը՝ համագործակցելով երկկողմ հետաքրքրություն ներկայացնող որոշ հարցերի շուրջ, ինչպիսին օրինակ տարածաշրջանային և միջազգային ընդհանուր սպառնալիքների չեզոքացումն է: Այս մոտեցումը թույլ կտա նաև պահպանել հաշտեցման հնարավորությունը՝ ըստ աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության:

Ռուսաստանի համար չափազանց անցանկալի է նաև ամբողջությամբ Չինաստանի ազդեցության գոտում հայտնվելու հեռանկարը, քանի որ այն մի կողմից կրկին կսահմանափակի Ռուսաստանի արտաքին քաղաքական ինքնուրույնությունը, մյուս կողմից Ռուսաստանի համար կարող է նաև էկզիստենցիալ ռիսկեր ստեղծել: Ռուսաստանի և Չինաստանի միջև տարածքային հակասությունները ակնհայտ էին դեռևս ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում, իսկ Սիբիրում ու Հեռավոր Արևելքում ՉԺՀ ազդեցության չափից ավել մեծացումը ռուսական փորձագիտական-քաղաքական շրջանակների կողմից ընկալվում է որպես երկրի տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգ:

Այսինքն՝ որքան էլ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում Չինաստանի հետ համագործակցության և ռազմավարական երկխոսության խորացումը կարևոր է Մոսկվաի համար, այնուամենայնիվ ամբողջությամբ չինական ազդեցության առանցքում հայտնվելու հեռանկարից խուսափելու համար Ռուսաստանը ստիպված է ավելի ճկուն արտաքին քաղաքականություն վարել: Մասնավորապես, Ռուսաստանի համար կարևոր է պահպանել ԱՄՆ-ի հետ հնարավոր երկխոսության պատուհանը՝ միաժամանակ զարգացնելով հարաբերությունները մյուս խոշոր՝ հատկապես տնտեսական և ֆինանսական դերակատարների հետ, ինչպիսիք են ԵՄ և Մերձավոր Արևելքի երկրները, Հնդկաստանը, Բրազիլիան, Ճապոնիան և այլն:

---

[113] "U.S.-Russian Relations in 2030" Richard Sokolsky and Eugene Rumer, Carnegie Endowment for International Peace, JUNE 2020, https://carnegieendowment.org/files/SokolskyRumer_US-Russia-2030_final1.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

Այս համատեքստում, հատկապես մեծ կարևորություն է ստանում ԵՄ-ՌԴ հարաբերությունների հետագա ճակատագիրը: Ինչպես Մոսկվան, այնպես էլ Բրյուսելը շահագրգռված չեն երկբևեռ աշխարհակարգի և «Նոր սառը պատերազմի» սցենարի արդյունքում երկու բևեռներից մեկի կցորդը դառնալու հեռանկարով[114]: Երկուսն էլ ունեն ինքնուրույն աշխարհաքաղաքական դերակատարին հատուկ բազմաթիվ ատրիբուտներ, սակայն իրենց ընդհանուր ներուժով զգալիորեն զիջում են թե՛ ՉԺՀ-ին, թե՛ ԱՄՆ-ին: Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, ԱՄՆ-ՉԺՀ մրցակցության խորացման, Ռուսաստանի՝ որպես Արևմուտքի հիմնական մրցակի կարգավիճակի փոփոխման արդյունքում, մեծ է հավանականությունը, որ ԵՄ-ը և ՌԴ-ը կփորձեն աստիճանաբար տարբեր հարցերի շուրջ հաշտեցման եզրեր գտնել:

Սակայն կարճաժամկետ հեռանկարում ԵՄ-ՌԴ կառուցողական երկխոսության սցենարը գեթե բացառվում է, այդ թվում՝ հաշվի առնելով Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների քաղաքականությունը օրակարգում պահելու ԵՄ մարտավարությունը և Բրյուսելում հակառուսական քաղաքականության հարցում ԱՄՆ-ի հետ ակնհայտ հակադրվելու ցանկության բացակայությունը: Սա ամենևին չի բացառում ԵՄ առանձին երկրների հետ հարաբերությունների կարգավորման հնարավորությունը, հատկապես եթե հաշվի առնենք այդ հարցում ԵՄ որոշ երկրների շահագրգռվածությունը[115], ինչը սակայն կախված է ինչպես այդ երկրներում ներքաղաքական զարգացումներից, այնպես էլ ԵՄ-ի՝ որպես միասնական արտաքին քաղաքական դերակատար գործելու հնարավորությունից:

Ըստ որոշ փորձագիտական գնահատականների՝ ներկայումս Ռուսաստանի աշխարհաքաղաքական կարգավիճակը նման է Չինաստանի նախորդ դարի 60-70-ական թվականների կարգավիճակին: Մոսկվան փորձում է ԱՄՆ-ին հակադրվել և միջազգային հարաբերությունների համակարգում նրա հետ մրցակցել այնքան ժամանակ, մինչև Չինաստանից բխող ավելի մեծ սպառնալիքը Վաշինգտոնին կստիպի Ռուսաստանի հանդեպ հնարավորինս մեծ զիջումների գնալ[116]:

---

[114] “Баланс слабостей. Как эпидемия изменит отношения России и ЕС”,Андрей Кортунов, 22 апреля 2020, https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/balans-slabostey-kak-epidemiya-izmenit-otnosheniya-rossii-i-es/ (այցելվել է 25.09.2020թ.):

[115] “The Pandemic Could Tighten China’s Grip on Eurasia”, ALEXANDER GABUEV, APRIL 24, 2020, https://carnegie.ru/2020/04/24/pandemic-could-tighten-china-s-grip-on-eurasia-pub-81635 (այցելվել է 25.09.2020թ.):

[116] “Соперничество великих держав в XXI веке”,Майкл Кофман, Июнь, 2018, https://ru.valdaiclub.com/files/22105/ (այցելվել է 25.09.2020թ.):

Միաժամանակ շատ փոքր է հավանականությունը, որ Ռուսաստանը ռազմա-քաղաքական դաշինք կկազմի երկու գերտերություններից որևէ մեկի հետ. գերտերությունները սովորաբար դաշինքների նկատմամբ մեծ համակրանք չեն տածում, քանի որ դրանք ենթադրում են ինքնիշխանության սահմանափակում և լրացուցիչ պարտավորություններ: ՌԴ-ՉԺՀ ռազմաքաղաքական խոր դաշինքը հնարավոր է միայն այն պարագայում, եթե ԱՄՆ-ից բխող վտանգը այնքան մեծ լինի, որ դրան դիմակայելու կարճաժամկետ առաջնահերթությունը գերակայի երկարաժամկետ փոխադարձ մրցակցության անխուսափելիության գիտակցման նկատմամբ, ինչպես դա եղավ «Սառը պատերազմի» ժամանակ ԱՄՆ-ՉԺՀ հաշտեցման շրջանում:

Փոխարենը Ռուսաստանն ու Չինաստանը փոխադարձաբար շահագրգռված են ֆինանսատնտեսական ոլորտում համագործակցության խորացման հարցում: Թեև Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերակատարության մեծացումը վերջինիս ինքնուրույն ներքին, արտաքին և պաշտպանական քաղաքականություն վարելու և խուսանավելու որոշակի հնարավորություններ է ընձեռում, սակայն տնտեսական և տեխնոլոգիական առումով Ռուսաստանը հետզհետե ընկնում է Արևելյան բևեռի ազդեցության տակ: Սա նշանակում է, որ ինքնուրույն աշխարհաքաղաքական դերակատարի կարգավիճակը պահպանելով հանդերձ՝ Ռուսաստանը, այնուամենայնիվ, տնտեսական և տեխնոլոգիական առումով Չինաստանից որոշակի կախվածություն է ունենալու, հետևաբար Արևելքի և Արևմուտքի միջև խուսանավելու հնարավորությունները սահմանափակ են լինելու[117]:

Փորձը ցույց տվեց, որ համավարակի ընթացքում ստեղծված հումանիտար ճգնաժամը որևէ լուրջ ազդեցություն չունեցավ պատժամիջոցների և առևտրային պատերազմների վրա: Առհասարակ, ներկայումս պատժամիջոցների և առևտրային պատերազմների սահմանը չափազանց անորոշ է դարձել, դրանք դուրս են եկել իրենց ավանդական տրամաբանությունից և վերածվել գերտերությունների մրցակցությանն օժանդակող երկարաժամկետ քաղաքական-տնտեսական գործիքների: Օրինակ, ԱՄՆ-ը «Հյուսիսային հոսք-2»-ի նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ Եվրոպայում առաջ է մղում սեփական էներգետիկ շահերը: Նույնը կարելի է ասել

[117] "The Pandemic Could Tighten China's Grip on Eurasia", ALEXANDER GABUEV, APRIL 24, 2020, https://carnegie.ru/2020/04/24/pandemic-could-tighten-china-s-grip-on-eurasia-pub-81635 (այցելվել է 25.09.2020թ.):

Չինաստանի տեխնոլոգիական հսկաների դեմ կիրառվող բազաթիվ սահմանափակումների մասին[118]:

Պատահական չէ, որ ԱՄՆ ազգային անվտանգության գործող ռազմավարության մեջ պատժամիջոցները ներկայացվում են որպես միջազգային հարթակներում մրցակիցների ներուժի զսպման և սահմանափակման գործիք[119]: ԵՄ-ը նույնպես, չունենալով միջազգային ազդեցության ավելի արդյունավետ գործիքակազմ, հաճախ ԱՄՆ պահանջով, երբեմն էլ սեփական նախաձեռնությամբ, փորձում է իր արտաքին քաղաքական շահերը առաջ մղել պատժամիջոցների և առևտրային սահմանափակումների միջոցով: Նման իրավիճակում Ռուսաստանը կրկին ստիպված է հայացքն ուղղել դեպի Արևելք և փորձել Արևմուտքի այս գործողություններին հակազդելու միջոցներ փնտրել:

Օրինակ, միջազգային պատժամիջոցների բացասական ազդեցությունը հաղթահարելու նպատակով ՌԴ-ը և ՉԺՀ-ը վերջին տարիներին նկատելիորեն սահմանափակել են երկկողմ առևտրում ԱՄՆ դոլարի կիրառումը: Եթե 2015-ին ԱՄՆ-ՉԺՀ երկկողմ գործարքների 90%-ն էր դոլարով կատարվել, ապա 2015թ.-ի առաջին եռամսյակում դոլարային գործարքների մասնաբաժինը կազմել է 46%: Ճիշտ է, ներկայումս համաշխարհային առևտրի 93%-ը իրականացվում է ամերիկյան դոլարով, սակայն Ռուսաստանի և Չինաստանի կողմից այս հարցում հետևողականությունը, ինչպես նաև այլ երկրների հետ ազգային արժույթներով առևտրի շրջանառության մեծացումը, կարող են աստիճանաբար կրճատել համաշխարհային շուկայի դոլարացման շնորհիվ ԱՄՆ ունեցած հսկայական առավելությունը[120]:

Ինչպես նշվեց, Արևմուտքի հետ տնտեսական ինտեգրման հնարավորությունների բացակայությունը Ռուսաստանին ստիպում է երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովելու նպատակով շեշտը դնել արևելյան ուղղությամբ տնտեսական հարաբերությունների զարգացման վրա: Չնայած այս ռազմավարության վերոհիշյալ երկարաժամկետ ռիսկերին, ներկայումս այն

---

[118] “Политика санкций после COVID-19: стоит ли ждать санкционных эпидемий?”, Иван Тимофеев, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Июнь 2020, https://ru.valdaiclub.com/files/34046/ (այցելվել է 25.09.2020թ.):

[119] National Security Strategy of the United States of America. 2017. https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2017/12/NSS-Final-12-18-2017-0905.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

[120] “China, Russia: Countries Decrease Use of U.S. Dollar in Bilateral Transactions”, Stratfor, Aug 6, 2020, https://worldview.stratfor.com/situation-report/china-russia-countries-decrease-use-us-dollar-bilateral-transactions (այցելվել է 25.09.2020թ.):

լավագույն այլընտրանքն է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Չինաստանի և Եվրասիական տարածաշրջանի մի շարք այլ երկրների համար: Պատահական չէ, որ Ռուսաստանն ու Չինաստանը ակտիվորեն լծված են Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) և «Մետաքսի ճանապարհի» տնտեսական տարածքի ինտեգրման գործին[121]:

Դեռ 2016թ. ՌԴ նախագահ Պուտինը առաջ էր քաշել Մեծ եվրասիական համագործակցության գաղափարը, որը ենթադրում էր ԵՏՄ-ի և չինական «Գոտի և ճանապարհ» նախագծերի ներդաշնակեցում՝ տարածաշրջանի ռազմավարական զարգացման նպատակով: Արդեն 2018թ. այս ուղղությամբ իրականացվեց առաջին կարևոր քայլը՝ ԵՏՄ և ՉԺՀ միջև ստորագրվեց առևտրատնտեսական համագործակցության պայմանագիր, որը կողմերի միջև համագործակցության համար ինստիտուցիոնալ բազա է ստեղծում[122]: Գործում է նաև ռուս-չինական միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի նպատակը ԵՏՄ և «Մետաքսի ճանապարհ» ծրագրերի համադրումն է[123]: Ըստ որոշ փորձագիտական կանխատեսումների՝ այս քայլերը միտված են մինչև 2025 թվականը Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) տարածքում ազատ առևտրի գոտու ստեղծմանը, այնուհետև մինչև 2030 թվականը ԵԱՏՄ, ՇՀԿ և ԲՐԻԿՍ-ի միջև ինտեգրման միջոցով համընդգրկուն տնտեսական համագործակցության ձևավորմանը[124]:

ՌԴ և ՉԺՀ կողմից առաջնորդվող ինտեգրացիոն տնտեսական գործընթացների համադրումը արդեն իսկ դրական ազդեցություն է ունենում երկկողմ տնտեսական հարաբերությունների վրա. 2019-ին զգալիորեն ավելացել է երկկողմ առևտրի

---

[121] Сопряжение ЕАЭС и ИПП: проблемы и перспективы, Петровский Владимир,Кулинцев Юрий, Ларионова Алевтина, Чай Юй, Ван Чэньсин, Цзян Цзин, РОССИЙСКИЙ СОВЕТ ПО МЕЖДУНАРОДНЫМ ДЕЛАМ, 2020, https://russiancouncil.ru/papers/EAEU-BRI-PolicyBrief29.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

[122] Подписано соглашение между ЕАЭС и Китаем, Министерство экономического развития РФ, 17.05.2018, https://www.economy.gov.ru/material/news/podpisano_soglashenie_mezhdu_eaes_i_kitaem.html (այցելվել է 25.09.2020թ.):

[123] "О 6-м заседании российско-китайской Рабочей группы по сопряжению планов развития Евразийского экономического союза и инициативы «Один пояс, один путь»" Министерство иностранных дел РФ, 20.12.19. https://www.mid.ru/evraziyskaya_economicheskaya_integraciya/-/asset_publisher/cb4udKPo5IBa/content/id/3967696 (այցելվել է 25.09.2020թ.):

[124] "Китайский взгляд на создание евразийского экономического пространства", Ли Синь, Международный дискуссионный клуб «Валдай». 17.11.2016. https://ru.valdaiclub.com/a/reports/kitayskiy-vzglyad-evraziyskogoe-prostranstvo/ (այցելվել է 25.09.2020թ.):

շրջանառությունը՝ կազմելով շուրջ 110 մլրդ դոլար[125]: Նույնիսկ համավարակի պայմաններում պահպանվում է Չինաստանի և ԵԱՏՄ անդամ հիմնական դերակատարների միջև առևտրաշրջանառության դրական դինամիկան: 2020թ. առաջին եռամսյակում չնայած ՉԺՀ արտաքին առևտուրը կրճատվել է 8.4%-ով, սակայն ՌԴ-ի հետ առևտուրը աճել է 3.4%-ով (25.4 միլիարդ դոլար), իսկ Ղազախստանի հետ՝ 17.8%-ով[126]: Դրական է նաև ՌԴ-ՉԺՀ էներգետիկ համագործակցության դինամիկան. 2019-ին Ռուսաստանից Չինաստան նավթի արտահանումը ավելացել է 8,6%-ով՝ հասնելով 77,7 մլն տոննայի[127]:

Առհասարակ, Ռուսաստան-Չինաստան հարաբերությունների օրակարգում առանցքային դեր են խաղում ԲՐԻԿՍ-ը և Շանհայի համագործակցության կազմակերպությունը: Համաշխարհային կառավարման ավանդական կազմակերպությունների հեղինակազրկման արդյունքում այս կազմակերպությունները հավակնում են դառնալ փոփոխվող աշխարհակարգի առանցքային միջազգային հարթակները[128]: ԲՐԻԿՍ-ի նկատմամբ Ռուսաստանի և Չինաստանի հետաքրքրությունները հիմնականում համընկնում են. երկուսն էլ փորձում են վերափոխել համաշխարհային կառավարման համակարգը և մեծացնել համաշխարհային քաղաքականության մեջ սեփական ազդեցությունը[129]:

ԱՄՆ-ի հետ երկարատև առևտրատնտեսական, քաղաքական հակամարտության պայմաններում ԲՐԻԿՍ-ի շրջանակներում համագործակցությունը Չինաստանին հնարավորություն կտա պահպանել կարևոր միջազգային կապերը և խուսափել միջազգային մեկուսացումից: Ռուսաստանն էլ իր հերթին ԲՐԻԿՍ-ը դիտարկում է Արևմտյան գերակայության վերացման և իր պատկերացմամբ ավելի

---

[125] "Товарооборот России и Китая в 2019 г. превысил 110 млрд долл", РБК, 14.01.2020, https://www.rbc.ru/rbcfreenews/5e1d58e29a794723545c4d34 (այցելվել է 25.09.2020թ.):

[126] "The Pandemic Could Tighten China's Grip on Eurasia", ALEXANDER GABUEV, APRIL 24, 2020, https://carnegie.ru/2020/04/24/pandemic-could-tighten-china-s-grip-on-eurasia-pub-81635 (այցելվել է 25.09.2020թ.):

[127] "Политические риски для мировой энергетики: от ресурсного национализма до «молекул свободы» и климатического оружия", Константин Симонов, Алексей Гривач, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Июль 2020, https://ru.valdaiclub.com/files/34084/ (այցելվել է 25.09.2020թ.):

[128] "Антикризисные импульсы БРИКС+: от стран БРИКС к региональным партнёрам", Екатерина Арапова, Ярослав Лисоволик, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Сентябрь 2020, https://ru.valdaiclub.com/files/34960/ (այցելվել է 25.09.2020թ.):

[129] "БРИКС и пандемия соперничества",Тимофей Бордачёв, Виктория Панова, Дмитрий Суслов, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Апрель 2020 https://ru.valdaiclub.com/files/32886/ (այցելվել է 25.09.2020թ.):

արդար՝ բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման համատեքստում: Բացի այդ, ԲՐԻԿՍ-ի երկրները հանդիսանում են ՌԴ-ի համար կարևոր առևտրա-տնտեսական գործընկերներ, իսկ արևմտյան պատժամիջոցների բացասական ազդեցությունը ինչպես Չինաստանի, այնպես էլ Ռուսաստանի պարագայում, որոշակիորեն մեղմվում է նաև ԲՐԻԿՍ-ի շրջանակներում համագործակցության շնորհիվ: Ինչ վերաբերում է ԲՐԻԿՍ-ի անդամ մյուս երկրներին, ապա Հնդկաստանի հետաքրքրությունը այս հարթակի նկատմամբ պայմանավորված է վերջինիս կողմից գերտերության կարգավիճակի ձգտմամբ, միաժամանակ այն թույլ է տալիս հանդես գալ Չինաստանի հետ նույն հարթության վրա, խուսափել ԱՄՆ-ից բացարձակ կախվածության հեռանկարից, սակայն նաև չմտնել վերջինիս հետ բացահայտ հակադրության մեջ: Ինչպես Հնդկաստանը, այնպես էլ Բրազիլիան և Հարավաֆրիկյան Հանրապետությունը շահագրգռված չեն, որպեսզի ԲՐԻԿՍ-ը վերածվի հակաարևմտյան կառույցի[130]:

ՌԴ-ՉԺՀ համագործակցության խորացումը ներկայիս փուլում նաև բխում է երկու երկրների քաղաքական, գաղափարախոսական և քարոզչական շահերից: Պեկինն ու Մոսկվան ակտիվորեն պայքարում են Արևմուտքի կողմից ինտերվենցիոն և ռեժիմի փոփոխությանը միտված քաղաքականության դեմ, ուստի հանդես են գալիս պետական ինքնիշխանության, անկախ քաղաքական համակարգերի պահպանման պաշտպանութան դիրքերից: Այս մոտեցումը դրսևորվեց նաև Հոնկոնգի ցույցերի և Ռուսաստանում տեղի ունեցած հանրաքվեի ժամանակ, երբ երկու երկրների առաջնորդները անվերապահորեն աջակցեցին միմյանց[131]:

Ճիշտ է, Չինաստանի հետ համագործակցության խորացումը Ռուսաստանի համար այս փուլում լուրջ այլընտրանք չունի, սակայն գերտերության կարգավիճակը պահպանելու և երկրի աշխարհաքաղաքական հավակնությունները բավարարելու համար Ռուսաստանին հարկավոր են արտաքին քաղաքական նոր գաղափարներ և մոտեցումներ: Վերջին շրջանում ռուսական փորձագիտական-քաղաքական շրջանակներում ավելի ակտուալ է դառնում ԱՄՆ-ՉԺՀ հակամարտության սրման պայմաններում Ռուսաստանը՝ որպես այլընտրանքային բևեռ ներկայացնելու

---

[130] “БРИКС и пандемия соперничества”,Тимофей Бордачёв, Виктория Панова, Дмитрий Суслов, Доклад Международного дискуссионного клуба «Валдай», Апрель 2020 https://ru.valdaiclub.com/files/32886/ (այցելվել է 25.09.2020թ.):

[131] “Xi Jinping says China firmly supports Russia's development path”, CGTN, 08-Jul-2020, https://news.cgtn.com/news/2020-07-08/Chinese-President-Xi-holds-phone-talk-with-Russian-President-Putin-RXEjYfLoBO/index.html (այցելվել է 25.09.2020թ.):

գաղափարը: Այն ենթադրում է, որ Ռուսաստանը պետք է տարբեր երկրների հնարավորություն տա խուսափել ԱՄՆ-ի և Չինաստանի միջև կոշտ ընտրություն կատարեու պարտադրանքից, միավորի այդ երկրներին «նոր չմիացման», ինքնիշխանության, տնտեսական, մշակութային ազատ զարգացման գաղափարների շուրջ: Այսինքն՝ առաջարկվում է, որ Ռուսաստանը ստանձնի «Նոր չմիացման շարժման» առաջնորդությունը, և այս հարցում համագործակցի շահագրգիռ մյուս երկրների, առաջին հերթին՝ Հնդկաստանի հետ: Սա ենթադրում է, որ որպես առաջնահերթ քայլ՝ Ռուսաստանը պետք է ակտիվացնի համագործակցությունը գործող Չմիացման շարժման կազմակերպության հետ և առաջ քաշի վերջինիս բարեփոխման նոր օրակարգ[132]:

Ներկայումս նաև բավական նպաստավոր պայմաններ են ստեղծված Ռուսաստանի՝ որպես «խաղաղարար» բևեռի և հակամարտությունների կառավարման առաջատար երկրի դերակատարության ամրապնդման համար: ԱՄՆ-ՉԺՀ մրցակցության խորացումը կնվազեցնի աշխարհի մի շարք տարածաշրջաններում առկա հակամարտություններում ԱՄՆ-ՌԴ հակասությունները և անմիջական բախման ռիսկերը՝ հաշվի առնելով այն, որ Վաշինգտոնի համար չափազանց բարդ կլինի արդյունավետ պայքար մղել հավասարապես երկու ճակատով: Սա նշանակում է, որ Միացյալ Նահանգները աստիճանաբար հետ կքաշվի Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ունեցող որոշ տարածաշրջաններից՝ փորձելով հիմնական ուժերը կենտրոնացնել Ասիա-խաղաղօվկիանոսյան ուղղությամբ. ընդ որում ԱՄՆ-ն արդեն սկսել է այս գործընթացը՝ վերջին տարիներին զգալիորեն կրճատելով ռազմական ներկայությունը Սիրիայում, Իրաքում, Աֆղանստանում, սահմանափակելով դեպի հետխորհրդային տարածք ՆԱՏՕ-ի ընդլայնման գործընթացը:

Որոշ դեպքերում ԱՄՆ հետքաշման վակուումը կփորձեն լրացնել այլ աշխարհաքաղաքական դերակատարներ՝ ԵՄ, ՉԺՀ, երբեմն էլ տարածաշրջանային գերտերությունները, ինչպիսիք են Թուրքիան, Իրանը, Սաուդյան Արաբիան,

---

[132] ЗАЩИТА МИРА, ЗЕМЛИ, СВОБОДЫ ВЫБОРА ДЛЯ ВСЕХ СТРАН: НОВЫЕ ИДЕИ ДЛЯ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ РОССИИ, Доклад НИУ ВШЭ, Москва, 2020, http://svop.ru/wp-content/uploads/2020/04/%D0%94%D0%BE%D0%BA%D0%BB%D0%B0%D0%B4_%D0%9D%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5-%D0%B8%D0%B4%D0%B5%D0%B8-%D0%B4%D0%BB%D1%8F-%D0%B2%D0%BD%D0%B5%D1%88%D0%BD%D0%B5%D0%B9-%D0%BF%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA%D0%B8-%D0%A0%D0%BE%D1%81%D1%81%D0%B8%D0%B8.pdf f (այցելվել է 25.09.2020թ.):

Հնդկաստանը և այլն: Այդ վակուումը լցնելու համար հատկապես մեծ հնարավորություն է ստանում Մոսկվան, որը Սիրիայում և Վենեսուելայում իրավիճակը կայունացնող քայլերից հետո զգալիորեն մեծացրել է այդ տարածաշրջաններում իր հեղինակությունը: Սրան կարող է նպաստել նաև ՌԴ ռազմական ներուժը. մասնավորապես, Ռուսաստանը, հակաօդային պաշտպանության գերժամանակակից միջոցներ մատակարարելով կոնֆլիկտային գոտիներ, կարող է նպաստել մրցակից տարածաշրջանային պետությունների միջև ուժերի հավասակակշռության ամրապնդմանը, միաժամանակ խրախուսելով սեփական ռազմարդյունաբերության զարգացումը[133]: Ռուսաստանը կփորձի նաև ավելի ակտիվորեն ներգրավվել հատկապես հետխորհրդային տարածաշրջանում և իր անմիջական հետաքրքրության շրջանակներում գտնվող գոտիներում հակամարտությունների կարգավորման գործընթացներին, փորձելով ստանձնել «առաջին ջութակի» կարգավիճակը և հնարավորինս կայունացնել իր սահմանակից տարածաշրջանները:

Փոփոխվող աշխարհակարգում Ռուսաստանի դերակատարությունը նաև կախված կլինի նրանից, թե ինչպիսի արագությամբ երկիրը կկարողանա դուրս գալ համավարակի արդյունքում ստեղծված ճգնաժամից և որքանով ի վիճակի կլինի պահպանել ներքին կայունությունը: Առայժմ Ռուսաստանը մի շարք ուղղություններով հաջողություններ է գրանցում: Մասնավորապես, Մոսկվան առաջինն է սկսել համավարակի դեմ պատվաստանյութի զանգվածային կիրառումը, չնայած ստեղծված ճգնաժամին՝ ՌԴ-իշխանությունները հաջողությամբ և առանց լուրջ ցնցումների անցկացրին սահմանադրական փոփոխությունները: Հատկապես համավարակի սկզբնական փուլում Ռուսաստանի արդյունավետ հումանիտար գործողությունները վերջինիս համար բարենպաստ պայմաններ ստեղծեցին նաև միջազգային քարոզչական դաշտում: Միաժամանակ, ի տարբերություն մի շարք արևմտյան երկրների, Ռուսաստանը առողջապահական, սոցիալ-տնտեսական ցուցանիշներով գտնվում է ավելի բարվոք վիճակում և ճգնաժամը վերջինիս համեմատաբար ավելի փոքր վնասներ է հասցրել: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ հետկորոնավիրուսային աշխարհում Ռուսաստանը նոր, ավելի կառուցողական և

[133] “Кризис миропорядка и глобальный Юг”, Андрей Кортунов, РОССИЙСКИЙ СОВЕТ ПО МЕЖДУНАРОДНЫМ ДЕЛАМ, 2020, https://russiancouncil.ru/papers/Global-South-Report59.pdf (այցելվել է 25.09.2020թ.):

կարևոր դերակատար դառնալու մեծ հնարավորություններ ունի, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանի և ողջ տարածաշրջանի համար:

4. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎՐԱ

Աշխարհաքաղաքական արագացող փոփոխություններն ու վերադասավորումները կարող են մեծ ազդեցություն ունենալ Հայաստանի և տարածաշրջանի վրա: Արդեն նշվեց, որ փոքր պետությունները հատկապես խոցելի են աշխարհաքաղաքական կտրուկ փոփոխությունների առջև, և մեծ է դրանց կարևորությունն ու ազդեցությունը թերագնահատելու ռիսկը: Քանի որ համավարակի և ստեղծված ճգնաժամի արդյունքում համաշխարհային գործընթացներն ավելի անկանխատեսելի և հախուռն են դարձել, շատ կարևոր է հասկանալ, թե դրանք ինչպես կազդեն Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հավասարակշռության վրա, ինչպիսի նոր ռիսկեր ու հնարավորություններ կարող են ստեղծվել Հայաստանի արտաքին քաղաքականության և անվտանգության տեսանկյունից:

Ըստ տարբեր կանխատեսումների՝ համավարակի արդյունքում ԱՄՆ-ՉԺՀ հակամարտության առավել սրման պայմաններում Վաշինգտոնը հետզհետե կնվազեցնի իր ռազմական ներկայությունը այն տարածաշրջաններում, որոնք Չինաստանի նկատմամբ զսպման տեսանկյունից անմիջական կարևորություն չեն ներկայացնում[134]: Խոսքը առաջին հերթին Մերձավոր Արևելքի և հետխորհրդային տարածաշրջանի մասին է: Միաժամանակ երկբևեռ համաշխարհային կարգի ձևավորումը կարող է զգալիորեն նվազեցնել տարածաշրջանի երկրների արտաքին քաղաքական ճկունությունը՝ վերջիններիս կանգնեցնելով աշխարհաքաղաքական ընտրության առջև: Սա նշանակում է, որ այս տարածաշրջանում առկա ուժային հավասարակշռությունը զգալի փոփոխությունների է ենթարկվելու, հետևաբար

[134] "The End of World Order and American Foreign Policy", Robert D. Blackwill and Thomas Wright, The Council on Foreign Relations (CFR), May 2020, https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/the-end-of-world-order-and-american-foreign-policy-csr.pdf (այցելվել է 25.09.2020թ.): "JUST SAY NO: THE PENTAGON NEEDS TO DROP THE DISTRACTIONS AND MOVE GREAT POWER COMPETITION BEYOND LIP SERVICE", MACKENZIE EAGLEN, OCTOBER 28, 2019, http://warontherocks.com/2019/10/just-say-no-the-pentagon-needs-to-drop-the-distractions-and-move-great-power-competition-beyond-lip-service (այցելվել է 25.09.2020թ.):

տարածաշրջանի երկրները պետք է վերանայեն իրենց արտաքին քաղաքական և անվտանգային առաջնահերթությունները:

Չնայած ԱՄՆ պաշտոնական ռազմավարական փաստաթղթերում Ռուսաստանի նկատմամբ զսպումը շարունակում է մնալ գերակայությունների շարքում, սակայն Չինաստանի հետ հակամարտության խորացումը այն մղում է երկրորդ պլան: Մերձավոր Արևելքում վերջին տարիներին ԱՄՆ-ը ավելի հազվադեպ է հակադրվում Ռուսաստանին և լրջորեն չի սահմանափակում վերջինիս հավակնությունները Սիրիայում, Լիբիայում և տարածաշրջանի մյուս երկրներում: Սա տարածաշրջանում Ռուսաստանին ավելի անկաշկանդ արտաքին քաղաքականություն վարելու հնարավորություն է տալիս: Միաժամանակ ԵՄ-ն նույնպես ի վիճակի չէ ամբողջությամբ փոխարինելու ԱՄՆ-ի տարածաշրջանային ազդեցությունը, չունի դրա համար անհրաժեշտ լծակներ:

Մերձավոր Արևելքից ԱՄՆ հետքաշման գործընթացը տարածաշրջանում ստեղծել է ազդեցության վակուում, որը ակտիվորեն փորձում են լրացնել մյուս գերտերություններն ու տարածաշրջանի խոշոր դերակատարները: Այստեղ իր դիրքերը հատկապես ամրապնդել է Ռուսաստանը, որը դարձել է տարածաշրջանային հակամարտությունների լուծման առաջնահերթ և ամենաազդեցիկ դերակատարներից մեկը: Նկատելի է նաև Չինաստանի որոշակի ակտիվությունը, որը փորձում է գերտերության իր կարգավիճակը ամրապնդել նաև չափազանց մեծ աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող այս տարածաշրջանում: Այս տեսանկյունից շատ կարևոր նշանակություն ունի Իրանի հետ ռազմավարական համագործակցության նոր համաձայնագիրը, որը ենթադրում է Իրանի և ՉԺՀ-ի միջև ենթակառուցվածքների զարգացման, ռազմական, էներգետիկ համագործակցության շուրջ 400 մլրդ դոլար արժողությամբ գործարք[135]:

[135] "What China-Iran deal means for Washington; China's reported multibillion economic and security deal with Iran could be a double-edged sword", Daniel Hoffman, Jul 23, 2020, https://www.al-monitor.com/pulse/originals/2020/07/china-iran-deal-trump-economy-security-jcpoa-conflict.html (այցելվել է 25.09.2020թ.): "Iran's Pact With China Is Bad News for the West; Tehran's new strategic partnership with Beijing will give the Chinese a strategic foothold and strengthen Iran's economy and regional clout", BY ALAM SALEH, ZAKIYEH YAZDANSHENAS, AUGUST 9, 2020 https://foreignpolicy.com/2020/08/09/irans-pact-with-china-is-bad-news-for-the-west/ (այցելվել է 25.09.2020թ.): "What China's New Deal with Iran Says About Its Ambitions in the Region", BY JOSEPH HINCKS, JULY 29, 2020, https://time.com/5872771/china-iran-deal/ (այցելվել է 25.09.2020թ.):

Ուժային վերադասավորումներից փորձում է հմտորեն օգտվել Թուրքիան: Առհասարակ, աշխարհի որոշակի ռեգիոնալիզացիայի պայմաններում, մեծանում են տարածաշրջանային գերտերությունների հնարավորությունները, իսկ Հարակովկասյան տարածաշրջանում և Մերձավոր Արևելքում Թուրքիան հանդիսանում է ամենամեծ հավակնություններն ունեցող և ագրեսիվ դերակատարներից մեկը: Պատահական չէ, որ Թուրքիան վերջին տարիներին սկսել է ավելի անթաքույց ցուցադրել իր տարածաշրջանային նկրտումները՝ կոշտացնելով ճնշումը հարևան գրեթե բոլոր երկրների նկատմամբ, նորից առաջին պլան մղելով պանթուրքական և պանիսլամական իր վաղեմի ծրագրերը: Միաժամանակ Անկարան փորձում է իր տեղը գտնել համաշխարհային քաղաքական փոփոխվող համակարգում՝ իր առջև դնելով ավելի գլոբալ ծրագրեր, հանդես գալով ՄԱԿ-ի բարեփոխման, միջազգային տարբեր կառույցներում Թուրքիայի դիրքերի ամրապնդման պաշտպանությամբ[136]: Ներկայումս վերջինիս ազգայնական և նվաճողական ծրագրերը զսպելու հնարավորություն ունեն հիմնականում միայն Ռուսաստանն ու Իրանը, մինչդեռ ԱՄՆ-ի և ԵՄ-ի ազդեցությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա նվազագույնի է հասել, և այս միտումը առաջիկա տարիներին հավանաբար կպահպանվի:

Նման իրավիճակում հարավկովկասյան 3 պետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը ստիպված են լինելու ավելի մեծ ուշադրություն դարձնել տարածաշրջանային գործընթացների վրա անմիջական և էական ազդեցություն ունեցող դերակատարների՝ առաջին հերթին ՌԴ-ի, Թուրքիայի և Իրանի հետ հարաբերություններին: Հաշվի առնելով այս երեքի շարքում Ռուսաստանի անհամեմատ ավելի մեծ հնարավորություններն ու աշխարհաքաղաքական դերակատարությունը, կարելի է ենթադրել, որ տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող գործընթացների նկատմամբ ամենամեծ վերահսկողությունը վերապահված է լինելու հենց Մոսկվային[137]:

---

[136] "The world order will need a post-COVID rethink, Turkish VP says", MON, JUN 1, 2020, https://www.atlanticcouncil.org/blogs/new-atlanticist/the-world-order-will-need-a-post-covid-rethink-turkish-vp-says/ (այցելվել է 25.09.2020թ.): Turkey - President Addresses General Debate, 75th Session, Sep 22, 2020, https://www.youtube.com/watch?v=-nsiqNYfLZw&ab_channel=UnitedNations (այցելվել է 25.09.2020թ.):

[137] "The New US Foreign Policy Consensus and the Role of the South Caucasus", Philip Roehrs-Weist, 23 JUN 2020, https://caucasuswatch.de/news/2838.html (այցելվել է 25.09.2020թ.):

Տարածաշրջանում նման փոփոխությունները կարող են առաջին հերթին մեծ ազդեցություն ունենալ Վրաստանի արտաքին քաղաքականության վրա: Ռուսաստանի ազդեցության մեծացումը, ինչպես նաև Թուրքիայից ու Ադրբեջանից չափազանց մեծ կախվածությունը զսպելու ցանկությունը Թբիլիսիին կստիպեն ՌԴ-ի հետ հաշտության եզրեր փնտրել և ավելի կառուցողական հարաբերություններ կառուցել: Սա կարող է միջնաժամկետ հեռանկարում Վրաստանին ստիպել հրաժարվել ՆԱՏՕ-ին անդամակցելու գաղափարից՝ հատկապես հաշվի առնելով մյուս կողմից նման ցանկության սահմանափակումը: Վրաստանում արդեն իսկ նկատելի է ստեղծված նոր իրավիճակի գիտակցումը, հետևաբար Թբիլիսիի կողմից նկատվում են նոր իրավիճակից բխող որոշ քայլեր. պատահական չէ, որ 2019թ. աշնանը տեղի ունեցավ 2008-ից ի վեր Վրաստանի և Ռուսաստանի արտգործնախարարների առաջին հանդիպումը[138]. նմանօրինակ հանդիպումները կարող են շարունակական բնույթ կրել:

Ինչ վերաբերում է Հայաստանին և Ադրբեջանին, ապա տարածաշրջանում Թուրքիայի և հատկապես Ռուսաստանի ազդեցության ամրապնդումը վերջիններիս կարող է ստիպել արտաքին քաղաքական առաջնահերթությունների շարքում ավելի մեծ ուշադրություն դարձնել ռեգիոնալ բաղադրիչին: Ընդ որում, Հայաստանը իր անվտանգային շահերը առաջ մղելու տեսանկյունից մեծ այլընտրանք չունի, և պետք է ավելի մեծացնի Ռուսաստանի հետ ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների պոտենցիալը: Խուսանավելու և ավել ճկուն քաղաքականություն վարելու տեսանկյունից շատ կարևոր է, որ Հայաստանը կարողանա զգալիորեն հարստացնել Իրանի հետ հարաբերությունների օրակարգը՝ հատկապես անվտանգության և տնտեսական հարցերի շուրջ: Սա նաև կարևոր է՝ հաշվ առնելով Իրան-ՉԺՀ ռազմավարական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև Իրան-ՌԴ և Իրան-ԵԱՏՄ տնտեսական համագործակցության խորացման հեռանկարները: Ադրբեջանի կախվածությունը Թուրքիայից ավելի ակնհայտ է դառնում՝ չնայած վերջինս նույնպես փորձում է իր արտաքին քաղաքականությունը հավասարակշռել Ռուսաստանի և Իրանի հետ համագործակցության ավելի ընդարձակ օրակարգի ձևավորմամբ:

ԱՄՆ-ՉԺՀ հակամարտության խորացմանը զուգահեռ՝ Հայաստանի համար շատ կարևոր է խուսափել այդ հակամարտության մեջ ներքաշվելու հեռանկարից:

[138] "Georgian and Russian FMs hold first talks in 11 years", Joshua Kucera Sep 27, 2019, https://eurasianet.org/georgian-and-russian-fms-hold-first-talks-in-11-years (այցելվել է 25.09.2020թ.):

Անհրաժեշտ է առավելագույնս սահմանափակել մասնակցությունը այնպիսի միջազգային գործընթացներին և կազմակերպություններին, որոնք ԱՄՆ-ՉԺՀ հակամարտության շրջանակներում հանդես են գալիս ակնհայտ կողմնակալ դիրքորոշմամբ: Այս տեսանկյունից Ռուսաստանի հետ համագործակցության խորացումը Հայաստանի համար կարող է լավագույն այլընտրանքը լինել, հատկապես եթե վերջինս փորձի այդ հակամարտության ընթացքում դիրքավորվել որպես երրորդ կողմ կամ «չմիացման» առաջնորդ:

Ռուսաստանի՝ որպես «նոր չմիացման շարժման» առաջնորդի կարգավիճակը, սակայն, կարող է Հայաստանի համար նաև որոշ ռիսկեր առաջ բերել՝ հաշվի առնելով ներկայումս գործող չմիացման շարժման կազմակերպությունում Ադրբեջանի մեծ ազդեցությունը: Այս ռիսկերը չեզոքացնելու համար Հայաստանը պետք է ավելի ակտիվորեն ներգրավվի այդ կառույցի աշխատանքներին, դիտարկի այնտեղ դիտորդի կարգավիճակը փոխելու և անդամ դառնալու հնարավորությունը: Կարևոր նշանակություն կարող է ունենալ Հնդկաստանի հետ հարաբերությունների խորացումը, այդ թվում՝ տնտեսական, ռազմատեխնիկական համագործակցության ակտիվացումը՝ հաշվի առնելով փոփոխվող աշխարհակարգում վերջինիս աճող դերակատարությունը, ինչպես նաև չմիացման շարժման ոչ ֆորմալ առաջնորդի կարգավիճակը:

Արևմուտքի համար Ռուսաստանի՝ որպես առաջին հակառակորդի կարգավիճակի փոփոխությունը և ՌԴ-ԵՄ հարաբերությունների որոշակի կարգավորման հեռանկարը նույնպես կարող է Հայաստանի համար դրական արտաքին քաղաքական միջավայր ստեղծել: ԵՄ-ի հետ ՀԸԳՀ-ի առկայությունը և անդամակցությունը ԵԱՏՄ-ին՝ Հայաստանի համար կարող է նպաստավոր իրավիճակ ստեղծել: Սակայն, հաշվի առնելով ԵԱՏՄ-ի և չինական «Գոտի և ճանապարհ» նախագծի միջև տնտեսական ինտեգրման հեռանկարները, Հայաստանը պետք է ձգտի զարգացնել հարաբերությունները նաև Ասիական տարածաշրջանի երկրների, առաջին հերթին՝ Չինաստանի հետ:

Համավարակը նաև սրել է աշխարհում տարբեր հակամարտությունների թեժացման, զինված բախումների բռնկման ռիսկերը: Չնայած ՄԱԿ-ի ԱԽ քարտուղարի խաղաղության կոչերին[139]՝ վերջին մի քանի ամիսների ընթացում մի

[139] António Guterres, United Nations Secretary-General, addresses the general debate of the 75th Session of the General Assembly of the UN, New York, 22 September 2020, https://www.youtube.com/watch?v=V2ZR45Bs3gs&ab_channel=UnitedNations (այցելվել է 25.09.2020թ.):

շարք հակամարտության գոտիներում զինված բախումները շարունակվում են, իսկ որոշ երկրներ ձգտում են ստեղծված ճգնաժամը օգտագործել սեփական ռազմատենչ ծրագրերը կյանքի կոչելու նպատակով: Հայաստանը նույնպես ականատես եղավ նման փորձի, երբ 2020թ. հուլիսին Ադրբեջանը ռազմական գործողություններ սանձազերծեց հայ-ադրբեջանական հյուսիսարևելյան սահմանի ուղղությամբ: Նկատելի են Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ռազմատենչ հռետորաբանության խորացումն ու Հարավային Կովկասում դիրքերն ամրապնդելու ուղղությամբ վերջինիս ակտիվ քայլերը: Թուրք-ադրբեջանական սադրանքներին դիմակայելու նպատակով Հայաստանը պետք է հնարավորինս խորացնի Ռուսաստանի և ՀԱՊԿ-ի հետ ռազմա-տեխնիկական համագործակցությունը, խուսափի երկկողմ հարաբերություններում արհեստական խոչընդոտներ ստեղծելուց, ինչպես նաև մեծացնի սեփական պաշտպանական ներուժը: Սա կարևոր է նաև արցախյան բանակցային գործընթացում Հայաստանի դիրքերի ամրապնդման տեսանկյունից, քանի որ Ռուսաստանի ազդեցության մեծացումը հուշում է, որ առաջիկայում տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման հարցում Մոսկվան դառնալու է որոշիչ դերակատարը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*